



ԽՆԱՄՔԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

# 2021 ՏԱՐԵԿԱՆ ԳԵԿՈՒՅՑ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության՝  
երեխաներին, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի  
ծառայություններ մատուցող պետական ոչ առևտրային կազմակերպություններում  
մշտադիտարկում իրականացնող հասարակական դիտորդական խումբ

### **ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ**

2021 թվականի գործունեության

# 1. Բովանդակություն

1.	Բովանդակություն	2
2.	Խմբի մասին	4
3.	Մեթոդաբանություն	6
4.	Դիտորդական խմբի զարգացումը և առաջ եկած խնդիրները	8
5.	Երեխաների շուրջօրյա խնամքի հաստատություններ	9
5.1.	Հակահամաճարակային կանոնների պահպանումը, պատվաստումների իրավիճակը և կանխարգելիչ այլ միջոցառումների իրականացումը	9
5.2.	Աշխատակազմի և երեխաների իրազեկվածությունը COVID-19-ի վերաբերյալ	12
5.3.	Բժշկական օգնությունը և սպասարկումը	13
5.4.	Երեխաների կրթությունը և ժամանցը համավարակի պայմաններում	20
5.5.	Կենցաղային սպասարկումը և անվտանգությունը	22
6.	Տարեցների շուրջօրյա խնամքի հաստատություններ	25
6.1.	Հակահամաճարակային կանոնների պահպանումը, պատվաստումների իրավիճակը և կանխարգելիչ այլ միջոցառումների իրականացումը	25
6.2.	Աշխատակազմի և տարեցների իրազեկվածությունը COVID-19-ի վերաբերյալ	26
6.3.	Բժշկական օգնությունը և սպասարկումը	27
6.4.	Կենցաղային սպասարկումը և անվտանգությունը	28
6.5.	Արտաքին աշխարհի հետ հաղորդակցությունը և վերաբերմունքը	31
7.	Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի հաստատություններ	33
7.1.	Հակահամաճարակային կանոնների պահպանումը, պատվաստումների իրավիճակը և կանխարգելիչ այլ միջոցառումների իրականացումը	33
7.2.	Աշխատակազմի և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրազեկվածությունը COVID-19-ի վերաբերյալ	34
7.3.	Բժշկական օգնությունը և սպասարկումը	35
7.4.	Կենցաղային սպասարկումը և անվտանգությունը	37
7.5.	Արտաքին աշխարհի հետ հաղորդակցությունը և վերաբերմունքը	38
8.	Այլ արձանագրումներ	39
9.	Եզրակացություն	41
10.	Ընդհանուր առաջարկություններ	42
11.	Առաջարկություններ՝ ըստ կազմակերպությունների	44

12.	Լուսանկարներ և մեկնաբանություններ	46
12.1.	Նորքի տուն-ինտերնատ (այց 09.12.2021 թ.)	46
12.2.	Նորքի տուն-ինտերնատ (այց 24.12.2021 թ.)	48
12.3.	Նորքի տուն-ինտերնատ (այց 16.02.2022 թ.)	50
12.4.	«Երևանի «Ջատիկ» երեխաների աջակցության կենտրոն» (այց 29.12.2021 թ.)	52
12.5.	«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն (այց՝ 04.11.2021 թ.)	53
12.6.	«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ (այց՝ 14.07.2021 թ.)	54
12.7.	«Գավառի մանկատուն (այց՝ 19.10.2021 թ.)»	55
12.8.	Երևանի «Մանկան տուն» (այց՝ 29.09.2021 թ.)	57
12.9.	Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ (այց՝ 12.11.2021 թ.)	60
12.10.	Խարբերդի մասնագիտացված մանկատուն (այց՝ 06.10.2021 թ.)	61
12.11.	Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն (այց՝ 28.09.2021 թ.)	63
12.12.	Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ (այց՝ 11.02.2022 թ.)	65
13.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մեկնաբանությունները	69

## 2. Խմբի մասին

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության՝ երեխաներին, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ մատուցող պետական ոչ առևտրային կազմակերպություններում մշտադիտարկում իրականացնող հասարակական դիտորդական խումբը (այսուհետ՝ Դիտորդական խումբ) ձևավորվել է 2018 թվականին: Ձևավորման համար հիմք է հանդիսացել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թ. հոկտեմբերի 16-ի N 112-Ա/1 հրամանը<sup>1</sup>:

Դիտորդական խմբի գործունեության հիմնական նպատակներն են՝

- 1) կազմակերպություններում հասարակության կողմից մշտադիտարկումների իրականացումը՝ մարդու իրավունքների պաշտպանության ապահովվածության տեսանկյունից,
- 2) աջակցության ցուցաբերումը՝ անձանց խախտված իրավունքների վերականգնմանը և նման խախտումների կանխարգելմանը,
- 3) ոլորտային իրավական ակտերի ուսումնասիրությունը, և ըստ անհրաժեշտության, դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին,
- 4) երեխաների, տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության բնագավառում մարդու իրավունքների պաշտպանության իրավիճակային վերլուծությունների, եզրակացությունների, առաջարկությունների կազմում և ներկայացում նախարարություն, ինչպես նաև հանրությանը:

---

<sup>1</sup> ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թ. հոկտեմբերի 16-ի N 112-Ա/1 հրաման, [https://www.mlsa.am/wp-content/uploads/2017/05/112-A-1-hraman.pdf?fbclid=IwAR1iQeQoPDDt5Q4OwJKWxNzRXy\\_UeEN7ljBLTdBzecreCK5qYhv4bBclEfs](https://www.mlsa.am/wp-content/uploads/2017/05/112-A-1-hraman.pdf?fbclid=IwAR1iQeQoPDDt5Q4OwJKWxNzRXy_UeEN7ljBLTdBzecreCK5qYhv4bBclEfs)

Դիտորդական խումբը մշտադիտարկումն իրականացնում է կազմակերպություններ այցելությունների և դրանց հիման վրա նախարարությանը հաշվետվությունների և հրապարակային առաջարկությունների ու զեկույցների ներկայացման ձևով:

Խումբը նախագահում է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ներկայացուցիչ Մարիետա Թեմուրյանը: 2021 թվականի ընթացքում Դիտորդական խմբում ներգրավված են եղել հետևյալ անձինք<sup>2</sup>, որոնք առաջադրվել են համապատասխան կազմակերպությունների կողմից՝

1. Արտաշես Սերգոյան, «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ,
2. Բելա Շիքարյան, «Մարդու իրավունքների միջազգային հանրություն» ՀԿ,
3. Լիլիթ Գևորգյան, «Առողջապահության քաղաքականության և նորարարության կենտրոն» ՀԿ,
4. Մուշեղ Հովսեփյան, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ,
5. Կարինե Դավթյան, «Կանանց իրավունքների տուն» ՀԿ,
6. Հայկ Մկրտչյան, անհատ,
7. Սերյոժա Օհանջանյան, «Էխո» հաշմանդամություն ունեցող անձանց իրավապաշտպան ՀԿ,
8. Քրիստինա Բաղդասարյան, «Ինթրա» հոգեբանական ակումբ ՀԿ:

Դիտորդական խումբը գործում է հասարակական հիմունքներով: 2021 թվականին դիտորդական խմբի գործունեությանը և տարեկան զեկույցի ստեղծմանն աջակցել է Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանը:

---

<sup>2</sup> ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2021 թ. հուլիսի 29-ի N 116-Ա/1, <https://www.mlsa.am/wp-content/uploads/2021/08/դիտորդական-խմբի-հրաման.pdf>

### 3. Մեթոդաբանություն

Սույն տարեկան զեկույցում ներկայացված են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության՝ երեխաներին, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ մատուցող պետական ոչ առևտրային կազմակերպություններում մշտադիտարկում իրականացնող հասարակական դիտորդական խմբի մշտադիտարկման արդյունքները:

Չընդգրկված դիտարկման մեթոդի կիրառման համար ստեղծվել են կառուցվածքաձևայնացված գործիքներ յուրաքանչյուր տիպի հաստատությունում մշտադիտարկումներն իրականացնելու համար:

Դիտորդական խումբը դիտարկումն իրականացրել է հետևյալ հիմնական փուլերով.

- նախապատրաստական փուլ,
- տվյալների հավաքում, այդ թվում՝ առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցների անցկացում,
- տվյալների ընդհանրացում և վերլուծություն,
- դիտարկման ավարտ,
- վերլուծություն և զեկույցի կազմում:

Զեկույցում ամփոփ ներկայացված են դիտարկման արդյունքները, դրանց վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ ՀՀ ԱՍՀՆ) պատասխանները, ինչպես նաև դիտորդական խմբի գնահատականը և եզրակացությունները:

2021 թ.-ի ընթացքում մշտադիտարկման այցեր են եղել ՀՀ ԱՍՀՆ համակարգում գործող 10 պետական ոչ առևտրային կազմակերպություններ.

Տարեցներին խնամքի ծառայություն մատուցող կազմակերպություններ՝

- Նորքի տուն-ինտերնատ (եռակի այց)
- Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ

Հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձանց խնամքի ծառայություն մատուցող կազմակերպություններ՝

- «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն
- Իսարբերդի մասնագիտացված մանկատուն
- Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ

Երեխաներին (չափահասներին) խնամքի ծառայություն մատուցող կազմակերպություններ՝

- Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն
- Երևանի Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն (կրկնակի այց)
- Գավառի մանկատուն
- Երևանի Մանկան տուն
- Երևանի «Ջատիկ» երեխաների աջակցության կենտրոն:

2021 թվականին առաջնահերթ են դիտարկվել հակահամաճարակային կանոնների պահպանումը, պատվաստումների իրավիճակը և կանխարգելիչ այլ միջոցառումների իրականացումը, աշխատակազմի և շահառուների իրազեկվածությունը COVID-19-ի վերաբերյալ, բժշկական օգնությունը և սպասարկումը, երեխաների կրթությունը և ժամանցը համավարակի պայմաններում, կենցաղային սպասարկումը և անվտանգությունը, արտաքին աշխարհի հետ հաղորդակցությունը և վերաբերմունքը:



Զեկույցում ներկայացված տվյալները հավաքվել են Դիտորդական խմբի կողմից կազմակերպություններ կատարած այցելությունների, ստացված ահազանգերի, կազմակերպություններում բնակվող (գտնվող) անձանց հետ ունեցած առանձնազրույցների, կազմակերպություններում աշխատողների հետ զրույցների, փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա: Զեկույցի համար տեղեկատվության աղբյուր են հանդիսացել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մեկնաբանությունները, տրամադրած տեղեկությունները, ինչպես նաև Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքը, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, իրավական այլ ակտեր:

#### **4. Դիտորդական խմբի զարգացումը և առաջ եկած խնդիրները**

Այցերի ընթացքում դիտորդական խումբն արձանագրել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողները, այդ թվում՝ ղեկավար անձնակազմը, ծանոթ չեն Դիտորդական խմբի վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանին:

Որպես օրինակ, Նորքի տուն-ինտերնատ այցի ժամանակ ինտերնատում գտնվող նախարարության հավասար հնարավորությունների վարչության տարեցների հիմնահարցերի բաժնի պետ Հայկ Հարությունյանը, տեղյակ չլինելով նախարարի հրամանից, կասկածի տակ է դրել դիտորդների իրավունքները:

Անհրաժեշտ է պետական ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարներին կրկին տեղեկացնել դիտորդական խմբի և նախարարի համապատասխան հրամանի վերաբերյալ, հետայսու քննել հանրային ծառայողների կամ կազմակերպությունների աշխատողների կողմից հրամանի խախտման դեպքերը:

Գործունեության արդյունքում դիտորդական խումբը վերհանել է նաև մի շարք խնդիրներ, որոնք կապված են նախարարի հրամանի հետ: Վերհանված խնդիրները և դրանց ուղղությամբ փոփոխություններն ու լրացումները կառաջարկվեն 2022 թվականի ընթացքում:

## **5. Երեխաների շուրջօրյա խնամքի հաստատություններ**

Դիտորդական խմբի կողմից 2021 թվականի ընթացքում մշտադիտարկման այցեր են կատարվել Երևանի Մարի Իզմիրյանի անվան մանկատուն, Երևանի մանկան տուն, Գավառի մանկատուն, Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն, Երևանի «Ձատիկ» երեխաների աջակցության կենտրոն: Այցերը եղել են չհայտարարված, որից մեկը՝ ստացված բողոքի հիման վրա:

### **5.1. Հակահամաճարակային կանոնների պահպանումը, պատվաստումների իրավիճակը և կանխարգելիչ այլ միջոցառումների իրականացումը**

**Երևանի Մարի Իզմիրյանի անվան մանկատանը** խնամվող երեխաների հետ հարցազրույցներում արձանագրվել է, որ համավարակի ընթացքում հիմնականում դիմակ չեն կրել կամ կրել են միայն այն ժամանակ, երբ ինչ-որ մեկը վարակակիր է եղել, սակայն նույնիսկ այդ դեպքում, ոչ միշտ: Երեխաների հետ առանձնազրույցներում նաև պարզ է դարձել, որ եթե իրենցից մեկը հիվանդացել է, վարակակիր երեխային չեն մեկուսացրել խմբից և երեխան շարունակել է բոլորի հետ միասին հաց ուտել ճաշարանում: Այդ դեպքում առանձնացվել է միայն սպասքը: Ըստ երեխաների՝ աշխատողները երբեմն կրել են դիմակ, սակայն ոչ միշտ:

Այցի ժամանակ դիտորդական խումբն արձանագրել է, որ ո՛չ անձնակազմից, ո՛չ սաներից որևէ մեկը դիմակ չի կրել, սոցիալական հեռավորություն չի պահպանվել, տեսանելի վայրերում չեն եղել ալկոհոլի հիմքով ախտահանիչ միջոցներ, դիմակներ կամ ձեռնոցներ:

Հաստատության անցակետում Դիտորդական խմբի անդամների ջերմաչափում չի իրականացվել, չեն ձեռնարկվել այլ կանխարգելիչ միջոցառումներ:

Այլ հակահամաճարակային և կանխարգելմանն ուղղված գործողությունների մասին տեղեկություններ այցի ընթացքում չեն ստացվել:

**Երևանի մանկան տանը** հոկտեմբերին կատարված այցի ժամանակ արձանագրվել են հակահամաճարակային կանոնների խախտումներ: Հաստատություն մուտք գործելիս դիտորդական խմբի անդամների ջերմաչափում չի իրականացվել, չեն ձեռնարկվել այլ կանխարգելիչ միջոցառումներ:

Այցի ընթացքում աշխատողների մեծ մասը չի կրել դիմակ կամ կրել է ոչ պատշաճ (ծածկելով միայն ծնոտը կամ բերանը): Անհրաժեշտ ոչ բոլոր վայրերում են եղել ախտահանիչ միջոցներ: Փակվող աղբամաններ առկա են եղել մասնաշենք մուտքի մոտ, ինչպես նաև որոշ սենյակների մուտքերի մոտ:

Այլ՝ COVID-19-ով չպայմանավորված սանիտարահիգիենիկ կանոնները հիմնականում պահպանվել են, իրականացվել են աշխատողների և սաների պարբերական ջերմաչափումներ, հատակի ախտահանում: Երեխաներն ունեցել են անհատական սպասք և սրբիչներ և դրանք առանձնացված են եղել աշխատակազմի սպասքից:

**«Երևանի «Ջատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ** 2021 թվականի դեկտեմբերի 29-ին՝ նախատոնական միջոցառման օրը, մուտք գործելիս դիտորդական խմբի անդամների ջերմաչափում չի իրականացվել, չեն ձեռնարկվել այլ կանխարգելիչ միջոցառումներ:

Անհրաժեշտ ոչ բոլոր վայրերում են եղել ախտահանիչ միջոցներ: Կենտրոնի տարածքում, այդ թվում՝ մուտքի մոտ, առկա են եղել փակվող աղբամաններ օգտագործված դիմակների համար:

Թեև կենտրոնում ցերեկային ծառայությունների առկայության արդյունքում մարդկանց մշտական անցուդարձին, հակահամաճարակային կանոնները հիմնականում պահպանված չեն եղել:

Ավելին, ցերեկային ծառայություններ ստացող երեխաները չափահասների (հիմնականում առանց դիմակ կրելու) ուղեկցությամբ համապատասխան խմբակներ գնում են ճաշարանով: Ճաշի ժամին, երբ շուրջօրյա խնամք ստացող երեխաները սնվում են, կա անցուդարձ, ինչը կարող է հոգեբանորեն բացասաբար անդրադառնալ ինչպես սնվող, այնպես էլ ժամանող երեխաների վրա: Փաստացի, ճաշարան անընդհատ մուտքն ու ելքը բացասաբար է անդրադառնում ճաշարանի մաքրության և հակահամաճարակային իրավիճակի վրա: Նման լուծում տրվել է այն պատճառով, որ «այլընտրանքային մուտքի դեպքում աշխատողները չեն կարող վերահսկել երեխաների գալ-գնալը»: Խնդրի մասին դիտորդական խումբը տեղեկացրել է կենտրոնի տնօրինությանը:

Այցի ժամանակ կենտրոնի աշխատողները գտնվել են ճաշարանում՝ ամանորյա միջոցառման, և ոչ ոք չի կրել դիմակ:

**«Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ 2021** թվականի սեպտեմբերի այցի ժամանակ հարցված երեխաները նշել են, որ համավարակի ընթացքում հիմնականում դիմակ չեն կրել: Կրել են միայն այն ժամանակ, երբ ինչ որ մեկը հիվանդանում էր, այն էլ ոչ միշտ: Ըստ սաների՝ ՊՈԱԿ-ի աշխատակազմը ոչ միշտ է դիմակ կրում: Այցի ժամանակ ամբողջ անձնակազմը կրել է անհատական պաշտպանիչ միջոց՝ դիմակ, սակայն սոցիալական հեռավորություն չի պահպանվել, տեսանելի վայրերում ալկոհոլային հիմքով ախտահանիչ միջոց նախատեսված բոլոր վայրերում չի եղել:

Այցի ժամանակ իրականացվել է դիտորդների ջերմաչափում, սակայն առանց գրանցամատյանում նշում կատարելու: Ջերմաչափում իրականացվել է ՊՈԱԿ-ի երկու մուտքերից միայն մեկում, իսկ ախտահանիչ միջոցներ տեսանելի վայրերում չեն եղել:

Գրանցամատյանի դիտարկումից պարզ է դարձել, որ թեև այցելությունը կատարվել է սեպտեմբերի 28-ին, լրացված են եղել նաև սեպտեմբերի 29-ի ջերմաչափման արդյունքները՝ կրկին «36.» նշումով: Ավագ բուժքույրը պարզաբանել է, որ դա արվել է պարզապես հետագայում շատ գրագրություն չունենալու համար և հետագայում կավելացվեն տասնորդականները:

Արձանագրվել է նաև, որ թե՛ աշխատակիցների, թե՛ սաների համար շենքային պայմանները ցերեկային կենտրոնում, և շուրջօրյա խնամքի մասում բավարար չեն եղել նվազագույն անհրաժեշտ ֆիզիկական հեռավորությունը պահպանելու համար:

## **5.2. Աշխատակազմի և երեխաների իրազեկվածությունը COVID-19-ի վերաբերյալ**

**Երևանի Մարի Իզմիրյանի անվան մանկատան** հարցված չափահաս բնակիչները նշել են, որ պատվաստվել են, սակայն որպես պատվաստում նկարագրել են քթից և բերանից նմուշառման գործընթացը: Ընդհանուր առմամբ՝ պատվաստումների վերաբերյալ, դրա դրական կողմերի, հնարավոր ազդեցությունների և անհրաժեշտության մասին հարցված երեխաներն իրազեկ չեն եղել:

Երեխաները նշել են նաև, որ կորոնավիրուսի և հակահամաճարակային կանոնների մասին տեղեկացել են դայակներից և հեռուստացույցից:

**Երևանի մանկան տան** տնօրենի տեղեկացմամբ՝ աշխատողները բավարար իրազեկված են եղել, ինքն առաջարկել է հրավիրել համաճարակաբանի՝ նրանց հարցերին պատասխանելու համար, սակայն ցանկություն չի եղել աշխատակազմի շրջանում: Մինչդեռ հարցված աշխատողները գրույցում նշեցին, որ ունեն բազմաթիվ հարցեր և լավ կլիներ, որ իրազեկում իրականացվեր, հրավիրվեր վարակաբան:

Թեև հաստատության տարբեր հատվածներում փակցված են իրազեկող նյութեր COVID-19-ի և պատվաստման վերաբերյալ, այնուամենայնիվ աշխատողները, ընդհանուր առմամբ, չեն համարել, որ բավարար իրազեկված են COVID-19-ի վերաբերյալ:

Աշխատակազմի որոշ ներկայացուցիչներ, այդ թվում՝ տնօրենը, գրույցներում հայտնել են COVID-19-ի վերաբերյալ հակագիտական, դավադրապաշտական և անհիմն վախերի վրա կարծիքներ, ինչը կարող է վտանգավոր լինել երեխաների առողջության հարցերում որոշում կայացնելիս:

**«Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում**, ընդհանուր առմամբ, պատվաստման գործընթացի, դրա անհրաժեշտության, պատվաստանյութերի դրական կողմերի մասին երեխաները բավարար իրազեկ չեն եղել:

Երեխաները նշել են, որ կորոնավիրուսի և հակահամաճարակային կանոնների մասին տեղեկացել են համացանցից:

Բուժանձնակազմի հարցված աշխատողներից մեկը մտահոգություն է ունեցել պատվաստանյութի բավարար չափով փորձարկված չլինելու վերաբերյալ, իսկ անձնակազմի բազմաթիվ անդամներ գրույցներում նշել են, որ սխալ են համարում պատվաստվելու կամ թեստավորվելու «պարտադրանքը»:

Աշխատողները նշել են, որ պատվաստման մասին պատշաճ իրազեկում չեն ստացել: Կենտրոնի կողմից չեն ձեռնարկվել հավելյալ գործողություններ՝ աշխատողների շրջանում COVID-19-ի վերաբերյալ հակագիտական և անհիմն վախերի փարատման ուղղությամբ:

### **5.3. Բժշկական օգնությունը և սպասարկումը**

**Երևանի Մարի Իզմիրյանի անվան մանկատուն 2021 թ. հուլիսի** այցի ընթացքում դիտորդական խումբը դիտարկել է դեղի և բժշկական պարագաների պահպանման վայրերը և դրանց ժամկետները: Առկա բոլոր դեղերը եղել են ժամկետում՝ դարակներում դասավորված լինելով ըստ ժամկետի, դրանց պահպանման համար անհրաժեշտ պայմաններում:

Ըստ մանկատան բժշկի՝ հիվանդությունների կանխարգելման հիմնական միջոցն օրվա ընթացքում դեղ բաժանելիս շփումն է երեխաների և խմբերում աշխատող մասնագետների հետ: Վերջիններս են առաջինը նկատում երեխաների տրամադրության փոփոխությունները, հիվանդություններին բնորոշ այլ երևույթները:

Ընթացիկ ստուգումների սահմանված ժամանակացույց առկա է եղել միայն էպիլեպսիա ունեցող երեխաների դեպքում: Մյուս հիվանդությունների կանխարգելման նպատակով հիվանդանոց այցերի կամ ինքնաստուգման ժամանակացույց առկա չէ:

Բժշկական փաստաթղթերը հիմնականում թղթային են, առկա չէ էլեկտրոնային համակարգ: Էլեկտրոնային գործիքների բացակայությունը հնարավորություն չի ընձեռում բժշկական անձնակազմին առավել արդյունավետ հետևել երեխաների առողջական վիճակին, այցերի կազմակերպմանը, մեծացնում է փաստաթղթերում փոփոխություններ անելու կամ դրանք ոչնչացնելու ռիսկը և այլն:

Հարկ է նշել, որ բժշկական անձնակազմն, ընդհանուր առմամբ, պատրաստ չէ թվայնացված համակարգի անցնելուն՝ կարծրատիպերի և տեխնիկական հմտությունների բացակայության պատճառով:

Դիտորդական խմբի արձանագրմամբ՝ երեխաները պարբերաբար չեն ջերմաչափվում, ինչը հիմնավորվում է այն հանգամանքով, որ Դիտորդական խմբի՝ ջերմաչափման մատյանը տրամադրելու պահանջը չի բավարարվել աշխատակազմի կողմից այն չգտնելու պատճառով: Տղաների խմբում Դիտորդական խմբի պահանջով գտնված ջերմաչափման միակ մատյանը վերջին անգամ լրացված է եղել երեք ամիս առաջ՝ ապրիլին:

Դիտարկումները և հարցազրույցները ցույց են տվել, որ երեխաների (հատկապես դեռահասների) սեռական և վերարտադրողական առողջությանն ուղղված գործողությունները խիստ անբավարար են: Երեխաներն իրենց տարիքին համապատասխան չեն ստանում հավաստի և ամբողջական տեղեկություններ իրենց մարմնի և առողջության վերաբերյալ, այդ թվում՝ չի իրականացվում երեխաների՝

սեռական բռնությունից և վերարտադրողականության իրավունքի այլ խախտումներից պաշտպանված լինելու մասին իրազեկվածության բարձրացում:

Այդ առումով հարկ է նշել, որ աղջիկներն իրենց մոտ չունեն թաց և չոր անձեռոցիկներ, միջադիրներ, ինչն առաջնային անհրաժեշտություն է հիգիենայի պահպանման և հիվանդությունների կանխարգելման տեսանկյունից: Դրանք, ըստ բժշկի, տրամադրվում են նրանց ըստ դաշտանային ցիկլի, երեխայի կամ դայակի պահանջով՝ պահեստից: Մինչդեռ պահեստի համար պատասխանատու անձի փոխանցմամբ՝ դրանք բաժանվում են բժշկի կողմից բուժկետից, որտեղ միջադիրներ և ներդիրներ չեն եղել: Պահեստում այդ ապրանքները, այդ թվում՝ տակդիրները, եղել են քիչ քանակությամբ և աշխատակիցների կարծիքով՝ ոչ լավ կամ լավագույն որակի:

Մանկատան բժշկի խոսքով՝ իրենք պարբերաբար անցնում են վերապատրաստումներ, այդ թվում՝ պարտադիր, սակայն դասընթացների և կարողությունների զարգացման ծրագրերի մասին տեղեկությունները համակարգված և հասանելի չեն, ինչի պատճառով երբեմն դուրս են մնում այդ ծրագրերից:

**Երևանի մանկան տան** տնօրենի հետ հարցազրույցից պարզ է դարձել, որ տնօրենն առհասարակ դեմ է պատվաստանյութերին, սակայն չի մանրամասնել, թե ինչ հիմնավորմամբ:

Մանկատանը խնամվող երեխաների դեպքում, ըստ նրա, որոշում պետք է կայացնեն բժիշկները՝ մանկատան բժիշկը և առողջության պահպանման առաջնային օղակի բժիշկը: Իր խոսքով՝ ինքը դեմ չի արտահայտվում որևէ մեկի պատվաստմանը, քանի որ այդպիսին է կառավարության քաղաքականությունն այդ ոլորտում, ուստի պետք է հետևել: Մանկատան աշխատակազմի հետ հարցազրույցներից պարզ է դարձել, որ այնուամենայնիվ, իրենց համոզմամբ, տնօրենը կարող է դեմ լինել որևէ երեխայի պատվաստման որպես խնամակալ և այդ դեպքում երեխան չի պատվաստվի: Աշխատակազմը նման դեպք չկարողացավ մտաբերել: Մանկատան բուժանձնակազմը, ի տարբերություն վարչական կազմի, հիմնականում կողմ է եղել պատվաստումներին:



Իրենց հավաստիացմամբ՝ իրենք միայն ժամանակավոր կարող են հետաձգել պատվաստման գործընթացը՝ երեխայի ընթացիկ, ոչ հիմնական առողջական խնդիրները բուժելու նպատակով: Վերջնական որոշումը կայացնում է ԱԱՊ բժիշկը և մանկատան տնօրենը:

Չնայած որ երեխաների համար ամբուլատոր և հիվանդանոցային ծառայությունները հիմնականում անվճար են, այնուամենայնիվ կան ծառայություններ (օրինակ՝ գենետիկ հետազոտությունները), որոնց համար մանկատունը ստիպված է լինում վճարել: Նման դեպքերում դիմում են բարերարների օգնությանը:

Որպես կանոն երեխաները կանխարգելիչ (ոչ ընթացիկ) հետազոտություններ չեն անցնում, բացառությամբ Դաունի համախտանիշ և մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաների, որոնք պարբերաբար անցնում են հոգեբուժական, ներզատաբանական և աուդիոմետրիայի հետ կապված հետազոտություններ:

Երեխաների առողջության վերաբերյալ տվյալները մշակվում են թղթային տարբերակով, երբեմն՝ սքանավորված: Բժշկական անձնակազմը չունի առանձին համակարգիչ, էլեկտրոնային գործիքներ չեն կիրառվում, թեև, ի տարբերություն այլ հաստատությունների, աշխատակազմը տեսնում է թվայնացման անհրաժեշտությունը:

Համավարակի խիստ սահմանափակումների ժամանակահատվածում սաների բոլոր ընթացիկ (պլանային) հետազոտությունները հետաձգվել են, իրականացվել միայն հրատապ դեպքերում: Հետաձգումների հետևանքով դիտարկման ժամանակ արձանագրվել են աշխատանքներ, որոնք պետք է արված լինեին նախկինում:

Ավագ բուժքրոջ սենյակում, որտեղ դեղերն են պահպանվում, դեղերը եղել են դասավորված ըստ ժամկետի, ինչը հնարավորություն է ընձեռել անձնակազմին հետևել ժամկետներին և բացառել թերացումները: Բժշկական անձնակազմի կարծիքով՝ հաստատությունում առկա են անհրաժեշտ բոլոր միջոցները, իրականացվում է պարբերական զննումներ, օրական երկու անգամ ջերմաչափում:

**«Երևանի «Ձատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում** հարցվող երեխաները նշել են, որ ցանկացած առողջական խնդիրների ժամանակ դիմում են դայակին կամ դաստիարակին, և, եթե կարիք է լինում դեղորայքի, ապա ստանում են անհրաժեշտ դեղերը: Երեխաները նշել են դեպք, երբ կենտրոնում առկա չի եղել դեղորայքը, ինչը լուծվել է աշխատողների կողմից դեղատնից ձեռք բերելու միջոցով: Անձնակազմը ևս տեղեկացրել է հրատապ դեպքերում անձնակազմի և բարերարների միջոցով դեղորայքի ձեռք բերման մասին և կարևորել հրատապ ընթացակարգով դեղերի ձեռքբերման հարցի լուծման անհրաժեշտությունը: Ինչպես բոլոր տեղերում, այս կենտրոնում ևս, ըստ ընթացակարգերի, երեխաներին բժշկական հաստատություններ ուղեկցում են դայակները կամ դաստիարակները: Այցի ընթացքում առկա բոլոր դեղերը եղել են ժամկետում դրանց պահպանման համար անհրաժեշտ պայմաններում:

Երեխաների առողջության վերաբերյալ տվյալները մշակվում են թղթային տարբերակով:

**Գավառի մանկատուն** այցի ընթացքում դիտարկված բոլոր դեղերը եղել են ժամկետում և դրանց պահպանման համար անհրաժեշտ պայմաններում:

Առկա են եղել ախտահանման և ջերմաչափման մատյաններ: Ջերմաչափման մատյանում նշված է օրական մեկ ջերմաչափում:

Հաստատության բժշկական անձնակազմը համալրված է: Մանկատան բժիշկը համատեղությամբ աշխատում է նաև պոլիկլինիկայում, ինչը հեշտացնում է աշխատանքը, բայց առաջացնում է ոխակեր: Մանկաբույժն իրականացնում է պրոֆիլակտիկ զննում, պատվաստումների դիտարկում, ուղարկում է ստացիոնար հետազոտությունների և այլն: Միաժամանակ, պատասխանատու է մանկատան տարածքի ախտահանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար:

Բժշկական փաստաթղթերը հիմնականում թղթային են, առկա չէ էլեկտրոնային համակարգ: Էլեկտրոնային գործիքների անհրաժեշտություն, ընդհանուր առմամբ չի բարձրաձայնվել:

**«Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ** այցի ընթացքում առկա բոլոր դեղերը եղել են ժամկետում՝ դարակներում դասավորված լինելով դրանց պահպանման համար անհրաժեշտ պայմաններում, բայց ոչ ըստ պահպանման ժամկետների:

Բուժանձնակազմի ներկայացուցչի խոսքերով՝ դեղերը և մյուս բժշկական միջոցները բավականացնում են, չնայած դեղերի համար նախատեսված միջոցներն 2021 թվականին կրճատվել են՝ 400,000 դրամից դառնալով 200,000 դրամ: Նախատեսված գումարը չի բավականացնում ՊՈԱԿ-ին, երբ անհրաժեշտություն է առաջանում ձեռք բերելու թանկարժեք դեղեր (օրինակ՝ հոգեմետ դեղեր): Նշված դեպքերում ՊՈԱԿ-ի պատասխանատուները դիմում են բարերարների կամ ծնողների օգնությանը: Նշվել է նաև, որ եթե որևէ դեղամիջոց այդ պահին առկա չի լինում բուժկետում, հերթապահ բժիշկը մոտենում է մոտակայքում գործող դեղատուն, պարտքով վերցնում է անհրաժեշտ դեղամիջոցը, այնուհետև ՊՈԱԿ-ը վճարում է դրա դիմաց:

Բուժանձնակազմի հարցված ներկայացուցիչների խոսքով՝ երեխաների առողջական խնդիրներն առաջնահերթ փորձում են լուծել «տնական մեթոդներով», իսկ եթե դրանք չեն օգնում, նոր կիրառել դեղեր:

Բուժկետում դիտարկման պահին եղել է երկու մատյան՝ դեղերի ընդունման և դուրս գրման մատյանը և հիվանդությունների գրանցման մատյանը:

Կանխարգելիչ բուժօգնության կազմակերպման ժամանակացույց չկա, պատվաստումների ժամանակացույցին ՊՈԱԿ-ը չի հետևում, այլ տեղեկանում են պոլիկլինիկայից ստացած զանգերից: ՊՈԱԿ-ի բժիշկը 6 ամիսը մեկ անգամ թերապևտիկ զննություն է իրականացնում տեղում:

Բժշկական փաստաթղթերը թղթային են, չկա էլեկտրոնային համակարգ: Էլեկտրոնային գործիքների բացակայությունը հնարավորություն չի ընձեռում բժշկական կազմին հետևել երեխաների առողջական վիճակին, այցերի կազմակերպմանը, մեծացնում է թղթերում փոփոխություններ անելու ռիսկը և այլն:

Ե՛վ ՊՈԱԿ-ի հարցված սաները, և՛ բուժանձնակազմը պնդել են, որ ըստ նախատեսվածի կատարվում է երեխաների ջերմաչափում, առկա է եղել մատյանը:

Բուժանձնակազմի հետ զրույցում պարզ է դարձել, որ երեխաների սեռական և վերարտադրողական առողջության՝ հիգիենային ուղղված գործողություններն անբավարար են: Երեխաներն իրենց տարիքին համապատասխան չեն ստանում հավաստի և ամբողջական տեղեկություններ իրենց մարմնի և առողջության վերաբերյալ, այդ թվում՝ չի իրականացվում երեխաների՝ սեռական բռնությունից և վերարտադրողականության իրավունքի այլ խախտումներից պաշտպանված լինելու մասին իրազեկում:

Աղջիկներն իրենց մոտ չունեն թաց և չոր անձեռոցիկներ, միջադիրներ (տակդիրներ):

Պետական գնումների միջոցով ձեռքբերված հիգիենիկ միջոցները, ըստ ՊՈԱԿ-ի աշխատակազմի ներկայացուցչի, բավարար չեն, այդ պահին առկա է եղել տակդիրների պակաս, իսկ ՊՈԱԿ-ի աշխատակազմը դա կապել է վերակազմակերպման գործընթացում առկա որոշակի դժվարությունների հետ: ՊՈԱԿ-ը պարբերաբար հիգիենիկ միջոցներ է խնդրում բարերարներից և այլ կազմակերպություններից:

Բուժանձնակազմի ներկայացուցչի խոսքերով՝ ստացիոնար և անհետաձգելի բուժօգնությունը հիմնականում տրամադրվում է Գյումրու Ավստրիական հիվանդանոցում, ինչը պայմանավորված է նաև նրանով, որ ՊՈԱԿ-ի բժիշկն աշխատում է այդ հիվանդանոցում: Հիվանդանոցում անվճար բուժօգնության հետ կապված խնդիրներ չեն առաջացել, բացառությամբ մեկ դեպքի, որը կապված է եղել գինեկոլոգիական բնույթի հետազոտության հետ: Հետազոտությունը կատարվել է հիվանդանոցի ղեկավարության «բարի կամքի» շնորհիվ:

Պլանավորված վիրահատությունները, ըստ բուժանձնակազմի, չեն իրականացվել միայն համավարակի խիստ սահմանափակումների օրերին, երբ ՊՈԱԿ-ն ամբողջովին գտնվում էր փակ ռեժիմում:

#### 5.4. Երեխաների կրթությունը և ժամանցը համավարակի պայմաններում

**Երևանի Մարի Իզմիրյանի անվան մանկատան** երեխաները դրական են արձագանքել դպրոցին վերաբերող հարցերին՝ նշելով, որ մեծ սիրով են հաճախում դպրոց, միևնույն ժամանակ ավստոսանք հայտնել, որ համավարակով պայմանավորված սահմանափակումների շրջանում որոշակի ժամանակահատված հեռավար ուսուցման էին անցել: Երեխաները նշել են, որ արտակարգ դրության ընթացքում, երբ մանկատանը եղել են խիստ սահմանափակումներ, մանկատան տարածքից դուրս չեն եկել, դասերին մասնակցել են հեռավար, ինչը դժվարացրել է ընկալելու գործընթացը:

Մանկատանն այցի պահին խնամվող երեխաներից 82-ը դպրոցահասակ է, որից 38-ը կրթությունը ստանում է հաստատությունում (տնային ուսուցում), 15 երեխա գնում է 17 հատուկ հանրակրթական դպրոց:

Սաները նշել են, որ անկախ դպրոցում դասերի ավարտի ժամից իրենք վերադառնում են հստակ ժամի, հաճախ դասընկերներից ավելի վաղ՝ պայմանավորված մանկատան մեքենայի՝ բոլոր սաներին միևնույն ժամին մանկատուն բերելով, ինչը համընկնում է ճաշի ժամի հետ:

Հարցվածների մի մասին տնային հանձնարարություններ դպրոցում չեն հանձնարարվում, մյուս մասը տնային աշխատանքներն իրականացնում է դաստիարակների օգնությամբ:

Մանկատան սաները հաճախում են տարբեր խմբակների ըստ իրենց նախասիրությունների մանկատան ներսում: Խմբակների մասին խոսելիս նաև նկատի էին ունենում տարբեր խաղային միջոցառումներ:

Մանկատան տնօրենի խոսքով՝ իրենք կազմել են երեխաների խմբեր, որոնք սովորում են մանկատան աշխատողներից՝ վարսահարդարից, խոհարարից, վրացքատան աշխատողներից, դերձակից: Մոտ 10-15 երեխա ներգրավված է այդ խմբերում, ինչը խնդրահարույց է և կարող է մեկնաբանվել որպես երեխայի աշխատանք:

Տնօրենի հավաստմամբ՝ ունեն ոչ միայն խմբային, այլ նաև անհատական պարապմունքներ լոգոպեդի, էրգոթերապևտի, հատուկ մանկավարժի, ձեռքի աշխատանքի վարպետի, երգի և պարի մասնագետների հետ: Լոգոպեդի և հատուկ մանկավարժի ծառայություններից օգտվում են բոլոր երեխաները, իսկ մյուսների դեպքում՝ «ըստ ցանկության և անհատական կարիքը հաշվի առնելով»:

Տնօրենի տեղեկացմամբ՝ երեխաները ցանկություն են հայտնել մասնակցելու նկարչության պարապմունքների, որոնք առկա չեն եղել: Հարցման պահին 0-5 տարեկան չորս երեխաներից ոչ մեկը չի հաճախել մանկապարտեզ, ինչը տնօրենի ԺՊ-ն հիմնավորել է վախով, որ այնտեղ չեն կարողանա ապահովել երեխաների ներառումը:

**«Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն»-ի** հարցվածներից մեծ մասը նշել են, որ հաճախում են տարբեր խմբակների, օրինակ՝ կարատեի, գորգագործության, ոսկերչության, նկարչության, տիկնիկագործության և կավագործության: Բացի այդ, նշվել է, որ կազմակերպվում է նաև երեխաների ժամանցը՝ թատրոն և այլ ժամանցային կենտրոններ այցելելու միջոցով:

Հատկանշական է, որ երեխաները նաև հոգեթերապիայի են հաճախում կենտրոնում: Երեխաները նաև նշել են, որ հաճախում են դպրոց և դեռևս խնդիրների չեն առնչվել: Նրանք նաև հավելել են, որ լինելու դեպքում էլ վստահ են, որ իրենք կկարողանան իրենց պաշտպանել կամ հարթել խնդիրը միայնակ, այլ ոչ կենտրոնի կամ ուսուցիչների միջամտությամբ:

Հարցվողներից մեծամասնությունը փաստել է, որ ո՛չ կրթական հաստատություններում, և ո՛չ կենտրոնում չեն առնչվել անարդարությունների:

Բացի այդ, երեխաների հետ խմբային դասապատրաստումներ իրականացվում էր ըստ խմբերի և առարկաների:

**«Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում** երեխաների կրթությունը հիմնականում կազմակերպվել է առցանց՝ օգտագործելով

դայակների, դաստիարակների և մյուս մասնագետների հեռախոսները: Կենտրոնը չունի բավարար թվով սարքավորումներ, իսկ եղած համակարգիչները հին են և ոչ սարքին: Կենտրոնը նախաձեռնել է որոշակի գործողություններ՝ համալրելու նոր սարքավորումներով:

Հարցված սաների մի մասը նշել է, որ չի ցանկանում մասնակցել կենտրոնի ներսում կազմակերպվող խմբակներին, փոխարենը նախընտրում են հաճախել սպորտային խմբակների: Մեծամասնությունը ներգրավված է եղել կենտրոնի ներսում գործող երգի, պարի, նկարչության խմբակներում:

Երեխաների հետ դասապատրաստումն իրականացվում է հիմնականում խմբակային, երբեմն նաև անհատական: Համավարակի ընթացքում հեռավար ուսուցումը, հարցվածների կարծիքով, դժվարություններ առաջացրել է, քանի որ նրանք առանց այդ էլ չունեն դպրոց հաճախելու մեծ ցանկություն:

### **5.5. Կենցաղային սպասարկումը և անվտանգությունը**

**Երևանի Մարի Իզմիրլյանի անվան մանկատունն** այցի օրն ապահովված է եղել հիգիենիկ և մաքրող պարագաներով, որոնք ձեռք էին բերվել պետական բյուջեի միջոցների և բարերարների աջակցությամբ: Աշխատակազմի որոշ անդամների դիտարկումներով՝ միայն պետության հատկացրած միջոցներով անհրաժեշտ պարագաներ ձեռք բերելու դեպքում մանկատունը կունենա դրանց պակաս: Պետական բյուջեի միջոցով ձեռք բերված նյութերն անհամեմատ էժան են, հետևաբար նաև անորակ, ինչով պայմանավորված էլ ավելի շատ է օգտագործվում աշխատակազմի կողմից ցանկալի որակը ստանալու համար:

Դիտորդական խմբի կողմից մտահոգիչ է համարվել սաների անձնական հիգիենայի համար նախատեսված պարագաների, օրինակ՝ շամպունի անորակ լինելը: Անձնակազմը խնդրին որոշակի լուծում տալու նպատակով բարերարների միջոցով ձեռք է բերել որակյալ մանկական շամպուններ ավելի փոքր տարիքի երեխաների համար՝ խուսափելու հնարավոր վնասներից:

Այցի օրը մանկատանը ջուր չի եղել, ինչի պատճառով մանկատան անձնակազմը կանգնել էր այլ տեղից ջուր բերելու խնդրի առաջ: Համաձայն տրամադրված տեղեկության՝ պահուստային ջուր ոչ բոլոր խմբերում (մասնաշենքերում) է հավաքվում:

Մանկատան տղաների մասնաշենքում (ենթաբաժնում) ննջարանային պայմանները չեն համապատասխանել սահմանված չափորոշիչներին՝ մահճակալները հնարավորինս խիտ են կահավորված: Տղա սաների համար նախատեսված և դիտարկված նույն ենթաբաժնում ճաշարանի մակերեսը փոքր է, և այնտեղ առկա սեղան-աթոռների թիվը պակաս է եղել սաների թվից: Վերջինիս պատճառով նրանք սնվում են հերթով:

Մտահոգիչ է զուգարանում զուգարանակոնքի և լոգարանի դուռ չունենալու կամ որևէ այլ տարբերակով առանձնանալու հնարավորության բացակայությունը՝ ինչը խախտում է խնամվող երեխաների անձնական անձեռնմխելիության իրավունքն ու անձնական տարածքի նկատմամբ հարգանքը:

**«Երևանի «Ջատիկ» երեխաների աջակցության կենտրոն»**-ում այցի օրն ապահովված է եղել հիգիենիկ և մաքրող պարագաներով:

Կենտրոնում առկա է հոսող տաք ջուր, սակայն կենտրոնի որոշ հատվածներ նախատեսվածից ցուրտ է եղել, օրինակ՝ բաղնիքը: Ընդհանուր միջանցքներն ու նաև երեխաների հիմնական մասնաշենքը ցուրտ է եղել բոլոր դիտորդների դիտարկմամբ: Ավագ խմբի երեխաներից մեկը նշել է, որ իր կարծիքով ցուրտ չէ և չեն մրսում կենտրոնում, այդ թվում՝ լոգարանում:

**«Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ** այցի օրը մանկատունն ապահովված էր հիգիենիկ և մաքրող պարագաներով, որոնք ձեռք էին բերվել պետության հատկացրած միջոցներով և բարերարների աջակցությամբ: ՊՈԱԿ-ի վարչական կազմի ներկայացուցչի խոսքերով՝ 2021 թվականին միայն պետության հատկացրած միջոցներով պարագաներ ձեռք բերելու դեպքում կենտրոնը կունենա դրանց պակաս:



ՊՈԱԿ-ի սաների անհատական անձնական հիգիենայի պարագաները Դիտորդական խմբին տեսնել չի հաջողվել, քանի որ տեղադրված չեն եղել դրանց համար նախատեսված վայրում: Վարչական կազմի ներկայացուցիչը նշել է, որ դրանք յուրաքանչյուր սան իր դարակում է պահում և յուրաքանչյուրի համար առկա է նվազագույն քանակի հիգիենայի պարագա, սակայն նպատակահարմար չի գտել դրանք ցույց տալ:

Խմբի դիտարկմամբ՝ բացակայել են երեխաների համար առանձին խոզանակները, ատամի մածուկները: Սանհանգույցներում հեղուկ կամ կոշտ օճառ տեղադրված է միայն մեկ լվացարանի մոտ, չնայած բոլոր սանհանգույցներում եղել է 3 և ավելի լվացարան, որոնց մի մասի վրա էլ ծորակը բացակայում էր:

Ծորակից հոսում է միայն սառը ջուր, անհրաժեշտության դեպքում է միայն միացվում տաք ջուրը:

Դիտարկման ընթացքում աղջիկներից մեկը լոգանք էր ընդունում, որի ժամանակ դուռը կողպած չէր, քանի որ այն չէր աշխատում: Բոլոր տարիքային խմբերի ննջասենյակների դռների ապակիները թափանցիկ էին:

Կահույքի և դրանցում հագուստի և կոշիկների պահպանման համար պայմանները բավարար չեն եղել, ինչը փաստել է նաև ՊՈԱԿ-ի վարչական կազմի ներկայացուցիչը:

**Երևանի Մանկան տուն** այցի ժամանակ արձանագրվել է, որ սրբիչներն անհատական են և համարակալված, սակայն, օրինակ, խմբերից մեկում 10 երեխայի համար լոգանքի ճիլոպը 3 հատ է եղել և ոչ անհատական: Աշխատողներից մեկը տվյալ դիտարկմանն ի պատասխան նշել է, որ նախընտրում է ձեռքով տրորել լողացնելիս, այդ դեպքում նաև հասկանում է կրեմներ օգտագործելու անհրաժեշտությունը: Հիգիենիկ պարագաների որակի խնդիր մանկատանն առկա չէ, որովհետև դրանց մեծ մասը ձեռք է բերվում բարեգործների միջոցով:

Առկա է քլոր պարունակող լուծույթ, որն օժտված է հակամանրէային ազդեցությամբ, որով ախտահանում էին, օրինակ, մանեժ-մահճակալը:

Երեխաների ափսեները և բաժակներն անհատական են, համարակալված: Բաժակները, ըստ աշխատակազմի, մշտապես ախտահանվում են: Երեխաների և աշխատակիցների սպասքն առանձնացված է պահարանի տարբեր դարակներում: Նոր ընդունվող երեխաներին հատկացվում է նոր սպասք:

**Գավառի մանկատանը** մեկանգամյա օգտագործման սրբիչներ առկա չեն եղել, առկա է եղել մեկ ընդհանուր կտորե սրբիչ: Վերջերս տեղադրվել են նաև էլեկտրական չորացուցիչներ:

Խոհանոցի վացարանում փակվող աղբամաններ առկա չեն: Բոլոր ծորակներից հոսում է նաև տաք ջուր:

Աղջիկների համար միջադիրներ առկա են եղել բուժկետում, իսկ մյուս պարագաները՝ պահեստում:

## **6. Տարեցների շուրջօրյա խնամքի հաստատություններ**

### **6.1. Հակահամաճարակային կանոնների պահպանումը, պատվաստումների իրավիճակը և կանխարգելիչ այլ միջոցառումների իրականացումը**

**Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ** նոյեմբերի 12-ի այցի ժամանակ հաստատություն մուտք գործելիս Դիտորդական խմբի անդամների ջերմաչափում չի իրականացվել: Չեն կատարվել նաև կանխարգելիչ այլ միջոցառումներ: Հակահամաճարակային կանոնների պահպանման մասին իրազեկում չի իրականացվել:

Այցի ժամանակ աշխատողների մեծ մասը, այդ թվում՝ տնօրենը, չեն կրել դիմակ: Ալկոհոլի հիմքով ախտահանող միջոցներ անհրաժեշտ բոլոր վայրերում չեն եղել, սակայն որոշ բնակիչներ իրենց սենյակներում ունեցել են ախտահանիչներ:

Խումբն արձանագրել է, որ հաստատությունում առկա է բնակիչների և աշխատողների ջերմաչափումների մատյան: Ըստ մատյանների՝ աշխատողների ջերմաչափումն իրականացվում է օրական մեկ, իսկ տարեցներինը՝ երկու անգամ:

**Նորքի տուն-ինտերնատ** դեկտեմբերի 9-ի այցի ժամանակ Դիտորդական խումբն արձանագրել է, որ անձնակազմի մեծ մասը (հատուկենտ բացառություններով) դիմակ չի կրել, սոցիալական հեռավորություն չի պահպանվել, անհրաժեշտ ոչ բոլոր վայրերում են եղել ալկոհոլի հիմքով ախտահանիչ միջոցներ, դիմակներ կամ ձեռնոցներ:

Հաստատության անցակետում Դիտորդական խմբի անդամների ջերմաչափում չի իրականացվել, չեն ձեռնարկվել այլ կանխարգելիչ միջոցառումներ: Մուտքից մեկ ժամ անց՝ խմբի անդամների բարձրաձայնելուց հետո, կատարվել է անդամներից երկուսի ջերմաչափում:

Այլ հակահամաճարակային և կանխարգելմանն ուղղված գործողությունների մասին տեղեկություններ այցի ընթացքում չեն ստացվել:

## **6.2. Աշխատակազմի և տարեցների իրազեկվածությունը COVID-19-ի վերաբերյալ**

**Երևանի թիվ 1 տուն-ինտերնատում** արձանագրվել է, որ հակահամաճարակային կանոնների պահպանման, պատվաստումների վերաբերյալ պատշաճ և համակարգված իրազեկում չի իրականացվել: Զրույցների ընթացքում պարզվել է, որ իրականացվել է իրազեկման մեկ հանդիպում՝ Զումով, որի ժամանակ ՀՀ առողջապահության նախարարության մասնագետները տեղեկացրել են վարակի վերաբերյալ:

Հարցված տարեցները և աշխատակազմը ոչ միշտ են բավարար իրազեկ եղել COVID-19-ի և պատվաստումների վերաբերյալ, ունեցել են կարծրատիպային, փաստերի վրա չհիմնված տեղեկություններ: Նրանց տեղեկության հիմնական աղբյուրը եղել է հեռուստատեսությունը և բուժանձնակազմը:

Պատվաստանյութն ընտրելիս տարեցները կողմնորոշվել են ոչ թե գիտական կարծիքով, այլ իրենց քաղաքական նախապատվությամբ՝ նախընտրելով ռուսական պատվաստանյութերը:

**Նորքի տուն-ինտերնատում** հարցված տարեցների մեծ մասը նշել է, որ պատվաստումն անհրաժեշտություն է և որ իրենք լրջությամբ են մոտեցել վարակին միայն այլ տարեցների մահերից հետո:

Պատվաստանյութն ընտրելիս, ինչպես Երևանի թիվ մեկ տուն-ինտերնատի տարեցները, կողմնորոշվել են իրենց քաղաքական նախապատվությամբ՝ նախընտրելով ռուսական պատվաստանյութերը:

Պատվաստումների մասին տեղեկացել են բուժանձնակազմից, սակայն տեղեկության հիմնական աղբյուրը եղել է հեռուստատեսությունը:

### **6.3. Բժշկական օգնությունը և սպասարկումը**

**Երևանի թիվ 1 տուն-ինտերնատում** արձանագրվել է, որ չի իրականացվում հիվանդությունների կանխարգելման համակարգված քաղաքականություն, այդ թվում՝ կանխարգելիչ (պրոֆիլակտիկ) զննություն տարեցների շրջանում: Հարկ է նշել, որ հաստատությունն ունի երկու բաժանմունք՝ ընդհանուր, որտեղ բնակվում են անձինք, որոնք չունեն բժշկական օգնության և խնամքի մշտական կարիք և բժշկական, որտեղ բնակվող անձինք մշտապես գտնվում են բժիշկների/բուժքույրերի հսկողության և խնամքի տակ: Կանխարգելիչ միջոցառումները հիմնականում իրականացվում են երկրորդ խմբի խնամվողների համար և կազմում են խնամքի ծառայության բաղադրիչ:

Հարցված տարեցները հիմնականում բողոքել են դեղերի հասանելիության խնդրից և ակնաբուժական ծառայությունների կարիքից:

Բժշկական փաստաթղթերը հիմնականում թղթային են, առկա չէ էլեկտրոնային համակարգ: Էլեկտրոնային գործիքների բացակայությունը հնարավորություն չի ընձեռում բժշկական անձնակազմին առավել արդյունավետ հետևել տարեցների

առողջական վիճակին, այցերի կազմակերպմանը, մեծացնում է փաստաթղթերում փոփոխություններ անելու կամ դրանք ոչնչացնելու ռիսկը և այլն:

**Նորքի տուն-ինտերնատում** հարցված տարեցները հիմնականում գոհ են եղել բուժանձնակազմից և բժշկական ծառայությունների որակից: Հարցվածների շրջանում դժգոհություն է եղել դեղերի տրամադրման, մարսողական հիվանդությունների դեպքում սննդակարգի և ներարկումների հետ կապված:

Ինտերնատում ցածր է մարսողության վրա ազդող հիվանդությունների (օրինակ՝ աղիների բորբոքային հիվանդությունը) դեպքում համապատասխան սննդակարգերի կարևորության վերաբերյալ գիտակցումը, հիվանդությունների վերաբերյալ գիտելիքների մակարդակը: Այդ պատճառով մի շարք հիվանդությունների դեպքում հատուկ սննդակարգի անվան ներքո «դիետիկ սնունդ» է համարվում առանց տոմատի, ոչ կծու, առանց թթվի սնունդը և հատուկ սննդակարգի ցուցումներով բոլոր անձանց տրամադրվում է նույն «դիետիկ» տարբերակը: Ինտերնատի բժշկական փաստաթղթերը հիմնականում թղթային են, սակայն օգտվում են Արմեդ համակարգից անվճար:

#### **6.4. Կենցաղային սպասարկումը և անվտանգությունը**

**Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ** այցի ժամանակ արված հարցումներով պարզվել է, որ ամսվա սկզբում տրամադրվում է հիգիենիկ պարագաներ՝ զուգարանի թուղթ, օճառ, սափրվելու պարագաներ, ատամի մածուկ: Հիգիենիկ պարագաների որակը հարցված աշխատողին և տարեց անձանց գոհացրել է:

Աշխատողները նշել են, որ նույն մաքրող միջոցները, կախված ստացման ժամանակահատվածից, տարբերվում են: Օրինակ՝ ամանի նույն հեղուկը լինում է ավելի թանձր կամ ջրիկ: Այցի ժամանակ ստացվել է ավելի թանձր տարբերակը, որը գոհացրել է աշխատողներին: Տուն-ինտերնատում օգտագործել են նույն ամանի հեղուկը, որն օգտագործվել է նաև Երևանի Մարի Իզմիրյանի անվան մանկատանը և որի որակից աշխատակիցները դժգոհ էին. տարայի տակ նստվածքը տեսանելի է: Բացի այդ, բացակայել են ամանի հեղուկների վրա պիտանելիության ժամկետները, իսկ

դիտարկված ամանի հեղուկի մեջ առկա են եղել սև կետեր և կանաչի հիշեցնող մասնիկներ:

Չնայած, որ սենյակներից յուրաքանչյուրն ունի իր սանհանգույցը, ոչ բոլորն են ապահովված լողանալու պայմաններով՝ կա՛մ չկա տաք ջուր, կա՛մ համապատասխան տարածք: Յուրաքանչյուր հարկում կա 1 ընդհանուր լոգարան, որտեղ կա միայն մեկ լոգախցիկ, ինչը բավարար չէ ամբողջ հարկին սպասարկելու համար: Արձանագրվել է նաև, որ 3-րդ հարկի լոգարանը պատշաճ չի գործում, քանի որ ջրի հոսքի խնդիր կա և վերևի հարկ քիչ քանակությամբ է ջուր հասնում:

Դիտորդական խմբի կողմից մտահոգիչ է համարվել հաստատության պահեստում հատկավոր մթերքի տոպրակների բաց լինելը: Օրինակ՝ բրնձի տոպրակը, մարմելադը և այլ, այդ թվում՝ չլվացվող սննդամթերք:

Խմբի անդամներին տեղեկացրել են, որ բժշկական անձնակազմին չեն տրամադրվում բժշկական ձեռնոցներ: Հարցը բարձրաձայնվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում, սակայն այցի օրվա դրությամբ աշխատողները ձեռնոցները ձեռք են բերել սեփական միջոցներով: Այս առումով հրատապ է բուժանձնակազմի աշխատանքային իրավունքների պատշաճ ապահովումը, քանի որ առանց ձեռնոց կրելու անվտանգ չէ, օրինակ, բաց վերքերի մշակումը:

Խմբի կողմից օրվա երկրորդ կեսին պահեստի դիտարկման ժամանակ ընդունվել է մատաղ, կանաչեղեն և բանջարեղեն: Ընդունված սննդամթերքի մեջ են եղել նաև օղու շշեր: Սննդամթերքի պիտանելիության հետ կապված ստուգում չի իրականացվել, թեև, ըստ դիետ-բուժքրոջ, բուժանձնակազմից նմուշ են վերցնում, նոր բաժանում սնունդը տարեց անձանց:

**Նորքի տուն-ինտերնատի** դեպքում խումբը, չնայած մշտադիտարկման այլ առաջնահերթություններին, արձանագրել է հատկապես սննդի կազմակերպման հետ կապված խնդիրներ, որոնք էականորեն բացասաբար են ազդել տարեց անձանց կյանքի որակի վրա և հրատապ լուծման կարիք ունեն:

Այսպես, տարեց անձինք տեղեկացրել են սննդի վատ որակի մասին, որով պայմանավորված հատկապես կանայք հիմնականում անձամբ են պատրաստում իրենց սնունդը: Ըստ տարեցներից մեկի ձևակերպման՝ «ճաշարանի տրամադրածն ուտելու չէ»:

Ընթրիքը տրամադրվում է ժամը 17:00-18:00-ն: Վաղ ընթրիքի պատճառով տարեց անձինք հավելյալ սննդի կարիք են ունենում 18:00-ից հետո և միայն անձնական միջոցներ ունենալու դեպքում են կարողանում քաղցը հագեցնել:

Խմբին մտահոգել է նաև սննդի կազմակերպման ոչ անհատականացված լինելը: Այն դեպքերում, երբ անձն ունի որևէ հիվանդություն, որը պահանջում է հատուկ սննդակարգի պահպանում, տուն-ինտերնատը չի կարողանում ապահովել սննդի բազմազանություն, ինչի պատճառով նշված անձինք կամ քաղցած են մնում որոշ օրերի, կամ ուտում իրենց առողջությանը վնասող սնունդ:

Արձանագրվել է, որ սննդի պահեստում առկա չի եղել բավարար մթերք առաջիկա ժամերի ընթրիքի համար: Աշխատողները սա պատճառաբանել են, որ սնունդ ստանալու օր է և կստանան անհրաժեշտ սննդամթերքը: Պահեստում դիտարկման ժամանակ հիմնական մթերքներից առկա է եղել երկու տարա մածուն, երշիկ, նրբերշիկ, ձու, պանիր, միս, քիչ քանակությամբ այլուր, սպիտակաձավար, մակարոն, ձուկ, սոխ և բազուկ, ընդ որում՝ սպիտակաձավարը, մակարոնը և այլ չլվացվող սննդամթերքները բաց տարաներում: Առկա էր նաև տոմատի մեկ մածուկ, որի վրա բացակայում էր ժամկետի մակնշումը: Երշիկների մակնշման ժամկետը չէր երևում փաթեթավորման ձևի պատճառով:

Խումբը նաև արձանագրել է մսի ստացումը և տեղափոխման գործընթացը: Դիտարկման ընթացքում միսը տարեցների տուն բերվել է ոչ հիգիենիկ պայմաններում՝ մեքենայի հատակին դրված ստվարաթղթի վրա, առանց փաթեթավորման և մսագործի մոտ տեղափոխվել բաց ձեռքերով, առանց արտահագուստի:

Արձանագրվել է, որ տարեցները սպասքը բերում են իրենց սենյակներից, քանի որ, ըստ աշխատողների, բնակիչները չեն վստահում խոհանոցի սպասքի մաքրությանը: Ճաշասրահի սեղաններին տեղադրված սփռոցները (փոխվել են հաջորդ այցի դրությամբ), աղամանները ընթրիքից առաջ եղել են ոչ պատշաճ մաքրության:

Հաջորդ երկու այցերի ընթացքում խումբը դիտարկել է միայն խոհանոցը:

Մսի պահեստավորման սենյակի սեղանին եղել է խավարասեր: Ներկա աշխատողները նշել են, որ տեղյակ են ու խնդիրը չեն կարողանում լուծել, ավելին՝ դա դիտարկվել է որպես բնական իրավիճակ: Ընդհանուր առմամբ խմբի կողմից մսագործի սենյակը, ճաշարանը գնահատվել են ոչ մաքուր:

Դիտորդներից երկուսն օգտվել են օրվա ճաշին տրամադրված սննդից՝ աղցան, բորջջ, մակարոնով փլավ, կոտլետ, հաց: Դիտորդների գնահատմամբ՝ սնունդը եղել է անհամ, չգոհացնող: Օրինակ՝ աղցանը եղել է առանց կանաչիների, համեմունքների և քիչ քանակությամբ ձեթի:

## **6.5. Արտաքին աշխարհի հետ հաղորդակցությունը և վերաբերմունքը**

**Երևանի թիվ 1 տուն-ինտերնատում** առկա էին մի քանի համակարգիչներ, որոնք հիմնականում գտնվում էին աշխատողների սենյակում և դրանցից խնամվողներն օգտվելու հասանելիություն չունեն: Աշխատողները նշել են, որ ըստ անհրաժեշտության իրենց հեռախոսները փոխանցում են տարեցներին՝ հարազատների հետ կապ հաստատելու համար:

Բնակիչների հետ զրույցներից պարզ է դարձել, որ մեծ մասն ունի սեփական հեռախոսը և հիմնականում դրանց միջոցով են կապ պահում հարազատների հետ՝ զանգի միջոցով: Բնակիչները, որոնք ունեն գումար և կարող են իրենց թույլ տալ օգտվել ինտերնետից, սոցիալական ցանցերի միջոցով նույնպես շփվում են հարազատների հետ: WiFi առկա է միայն ադմինիստրատիվ մասնաշենքում:

Վատ վերաբերմունքի վերաբերյալ տվյալներ չեն ստացվել:



Դիտարկման ժամանակ բնակիչներից մեկը բարձրաձայնել է, որ լսել է, թե ինչպես են սանիտարները նոր հագուստ ստանալու ժամանակ ասել. «Ինչու եք դրանց տալիս նոր շորերը, տվեք մենք կհագնենք»:

**Նորքի տուն-ինտերնատում** կա համակարգչային սենյակ, որտեղից կարող են տարեցներն օգտվել համացանցից: Համավարակի ժամանակ, ըստ տարեցների, հիմնականում օգտվել են իրենց հեռախոսներից, սակայն անհրաժեշտության դեպքում հաստատությունը թույլ է տվել օգտվել համակարգչից:

Վարչական կազմի կողմից որպես խնդիր է նշվում համակարգիչների պակաս լինելը՝ նույնիսկ աշխատողների համար, որոնց գործն առնչվում է համակարգչային ծրագրերի հետ:

Դիտարկման օրվա դրությամբ առաջին հարկում եղել է առանձին տեսակցությունների սենյակ և հարազատները կարողացել են տեսակցել խնամվողներին այդտեղ: Նախկինում հարազատները հնարավորություն ունեցել են բարձրանալու սենյակներ, դիտարկման օրվա դրությամբ՝ ոչ:

Բացասական վերաբերմունքի մասին ուղղակի տեղեկություններ տարեցներից չի ստացվել, սակայն աշխատողները խմբի հետ շփումներում հաճախ են օգտագործել «սրանք» ձևակերպումը, խնդիրները վերագրել տարեցների մտավոր կարողությանը կամ բնավորությանը, ոչ թե իրենց թերացումներին: Վարչական կազմի կողմից բացասական վերաբերմունք կա հատկապես ենթադրաբար հոգեկան առողջության խնդիրներ ունեցող տարեցների նկատմամբ:

## **7. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի հաստատություններ**

### **7.1. Հակահամաճարակային կանոնների պահպանումը, պատվաստումների իրավիճակը և կանխարգելիչ այլ միջոցառումների իրականացումը**

**«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն ՊՈԱԿ** 2021 թվականի նոյեմբերի 4-ի այցի ժամանակ դիտորդների ջերմաչափում կամ կանխարգելիչ այլ միջոցառում չի իրականացվել:

Այցի ընթացքում աշխատողները դիմակ չեն կրել: Անհրաժեշտ բոլոր վայրերում տեղադրված չի եղել փակ աղբաման, ախտահանիչ նյութեր:

Նշվել է, որ դիտարկման դրությամբ վարակված բնակիչները ոչ միշտ են մեկուսացվում ընդհանուր խմբից, հակահամաճարակային կանոնները նույն խստությամբ չեն պահպանվում ինչպես համավարակի սկզբում:

**Խարբերդի մասնագիտացված մանկատուն** 2021 թվականի հոկտեմբերի այցի ժամանակ հիմնական մուտքի մոտ կատարվել է դիտորդների ջերմաչափում, առաջարկվել է դիմակ, կատարվել է ձեռքերի ախտահանում: Ջերմաչափման արդյունքները չեն գրանցվել: Աշխատողները (բացառությամբ տնօրենի) դիմակ հիմնականում կրել են դիտորդներին նկատելիս և ցուցադրաբար: Տնօրենը դիմակ չի կրել:

**Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ** 2021 թվականի նոյեմբերի 2-ի այցի ժամանակ դիտորդների ջերմաչափում երկու մասնաշենքերում էլ չի արվել: Չեն ձեռնարկվել նաև կանխարգելիչ այլ միջոցառումներ: Հիմնական մասնաշենքում աշխատակազմը դիմակ չի կրել, իսկ երկրորդ մասնաշենքում, որտեղ այցելել են դիտորդներն առաջին մասնաշենք մտնելուց հետո, ամբողջ անձնակազմը կրել է դիմակներ:

Առկա են եղել ջերմաչափման մատյանները, որոնցում նշումները կատարվել են պատշաճ կերպով:

## **7.2. Աշխատակազմի և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրազեկվածությունը COVID-19-ի վերաբերյալ**

**«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն ՊՈԱԿ-ի** հարցվող բնակիչները նշել են, որ վարակի վերաբերյալ իրազեկվել են հաստատության առաջին վարակման դեպքից հետո:

Վարչական մասի աշխատողներից մեկի խոսքով՝ աշխատակիցների և բնակիչների իրազեկումն իրականացվել է հաստատության բժշկ-թերապևտների կողմից՝ բանավոր, այդ թվում՝ անհատական զրույցների միջոցով: Տնօրենը նաև նշել է, որ ինքն էլ է իրազեկել բնակիչներին և օրինակ ծառայելու համար, առաջինն է պատվաստվել:

Աշխատակազմի հարցված անդամները նշել են, որ բուժքույրերը իրազեկման զրույցներ են ունեցել բնակիչների հետ, իսկ այն բնակիչների դեպքում, որոնց հետ հնարավոր չեն համարել այդ մասին իրազեկել, հաստատության սոցիալական աշխատողները իրազեկել են բարեկամներին:

Պատվաստման գործընթացի և պատվաստանյութերի վերաբերյալ խնամվողների շրջանում պատշաճ իրազեկում ո՛չ պատվաստումից առաջ, ո՛չ դրանից հետո չի իրականացվել:

**Խարբերդի մասնագիտացված մանկատան** հարցված աշխատողներից ոչ բոլորն են ունեցել COVID-19-ի վերաբերյալ փաստերի վրա հիմնված կարծիք, թերահավատորեն են մոտեցել վարակին: Խնամվողները նշել են, որ կորոնավիրուսի և հակահամաճարակային կանոնների մասին տեղեկացել են հիմնականում անձնակազմից, իսկ անձնակազմի դեպքում տեղեկատվության հիմնական աղբյուրը զանգվածային լրատվամիջոցներն են:

Պատվաստումների վերաբերյալ իրազեկումը բավարար կարևոր չի եղել անձնակազմի համար:

**Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատում** աշխատակազմը հիմնականում ունեցել է բավարար գիտելիք COVID-19-ի վերաբերյալ: Խնամվողների՝ վարակի մասին տեղեկության հիմնական աղբյուրը եղել են բուժաշխատողները, իսկ բուժաշխատողների դեպքում՝ պոլիկլինիկական և զանգվածային լրատվամիջոցները:

Թեև պատվաստումների բարձր ցուցանիշին, խնամվողների մեծ մասին իրենց հարմար ձևաչափերով չի տրամադրվել տեղեկություն պատվաստման գործընթացի մասին:

### **7.3. Բժշկական օգնությունը և սպասարկումը**

**«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն ՊՈԱԿ-ի** բժշկական անձնակազմը համալրված է 2 հոգեբույժով, որոնք աշխատում են 0.5 դրույքով, սակայն, ըստ վարչական կազմի հարցված աշխատողի, կարիք կա համալրել կազմը կլինիկական հոգեբանով և լրացուցիչ հոգեբույժով:

Բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ բողոքներ բնակիչների կողմից չեն հնչել:

Բժշկական մասում առկա դեղորայքը եղել է ժամկետում: Եղել է աշխատողների ջերմաչափման մատյան:

**Խարբերդի մասնագիտացված մանկատան** բուժական մասում առկա դեղերը պիտանելիության ժամկետներում են եղել:

Վարչական կազմի հավաստմամբ՝ դեղորայքին տրամադրվող բյուջեն նվազեցվել է, և կան դեղեր և միջամտություններ, որոնք հասանելի չեն, ուստի հայցում են բարերարների օգնությունը:

Խնամվողների սեռական և վերարտադրողական առողջության հարցերը պատշաճ ուշադրության չեն արժանանում անձնակազմի կողմից և նույնիսկ բուժանձնակազմի

շրջանում այդ թեման փակ է: Նրանք սեռական և վերարտադրողական առողջությունից զրուցելու կարիք չեն տեսնում՝ նշելով թե դա իրենց պարտականությունը չէ, սակայն եթե հարցնեն, «մի կերպ կպատասխանեն»:

Առկա էր ինչպես ջերմաչափման, այնպես էլ շինությունների ախտահանման գրանցամատյան: Ջերմաչափումն իրականացվում է օրական 2 անգամ: Քանի որ չկա ջերմաչափման միասնական գրանցամատյանի ձևաչափ, ՊՈԱԿ-ը մշակել է իր գրանցամատյանի ձևը, ինչն օրինակելի փորձ է:

Համավարակով պայմանավորված՝ դիտարկման տարվան նախորդող տարում ընթացիկ կանխարգելիչ հետազոտությունները չեն իրականացրել, ուստի դիտարկվող տարում հերթեր են առաջացել:

Մանկատունն ունի նաև պատվաստման կետ: Երեխաներն ազգային օրացույցով նախատեսված պատվաստումները ստանում են մանկատանը: COVID-19-ի դեմ պատվաստումները տեղում ստանում են աշխատողները, ինչին հարցված աշխատողներից մի քանիսը դեմ են արտահայտվել՝ խնդրելով բարձրաձայնել այդ հարցը, քանի որ իրենք չեն կարող պատասխանատվություն կրել նաև աշխատողների առողջության համար:

Ի տարբերություն այլ հաստատությունների մեծամասնության՝ Խարբերդի մանկատանն առկա է Արմեդ համակարգին հասանելիություն, որի համար վճարում են 15,000 դրամ:

Դժգոհություն է հնչել նաև, որ երբ դիմում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն որևէ անձի առողջական վիճակի հարցով, նախարարությունն ուղորդում է ՀՀ առողջապահության նախարարություն: Մինչդեռ կանոնակարգված աշխատանքի դեպքում իրենք կարող էին ուղարկել դիմումները միանգամից:

**Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատում**, ըստ վարչական և բուժական անձնակազմի, խնամվողները 3 ամիսը մեկ արյան ընդհանուր հետազոտություն են անցնում պոլիկլինիկայում: Հաստատությունում մատուցվում են

հոգեբուժական, ատամնաբուժական և թերապևտիկ ծառայություններ: Կա լաբորատորիա, որտեղ իրականացվում է արյան և մեզի ընդհանուր հետազոտություն, գլյուկոզայի չափում: Մնացած դեպքերում բժշկական սպասարկումն իրականացվում է պոլիկլինիկայում կամ հիվանդանոցներում: Վերջերս շարժական կայանի միջոցով կազմակերպվել է ֆլյուրոգրաֆիկ հետազոտություն, որը կրկնվում է ամեն տարի:

Ըստ աշխատակազմի հարցված անդամների՝ նախկինում իրականացվել է նաև արգանդի պարանոցի քաղցկեղի սքրինինգ, սակայն համավարակի պատճառով դադարեցրել են՝ պոլիկլինիկա չհաճախելու ու վարակի տարածումը կանխելու նպատակով:

Բժշկական գործերը կազմակերպվում են թղթային տարբերակով, հաստատությունը չունի հասանելիություն Արմեդ էլեկտրոնային համակարգին:

Հաստատության համար հրատապ է շարունակում մնալ հոգեբույժով համալրվելու հարցը:

#### **7.4. Կենցաղային սպասարկումը և անվտանգությունը**

**«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն ՊՈԱԿ-ի** լվացարաններում մեկանգամյա սրբիչներ առկա չեն եղել, սակայն բոլոր շահառուներն ունեցել են իրենց անվանական սրբիչները և հիգիենիկ պարագաները՝ կոշտ օճառ, ատամի խոզանակ և այլն: Շամպունը մեկն է եղել ամբողջ խմբի համար: Հիգիենիկ պարագաները ժամկետի մեջ էին: Առաջին հայացքից որակի հետ կապված մտահոգությունների առիթ չի եղել: Միջադիրներ, տակդիրներ սենյակներում չեն եղել, ըստ անձնակազմի՝ տրամադրվում են ըստ անհրաժեշտության: Մաքրող միջոցներ առկա են եղել: Թե՛ մաքրությամբ զբաղվող աշխատողները, թե՛ ախտահանման պատասխանատու բուժանձնակազմը, այդ պահին եղած միջոցներից դժգոհություններ չի ունեցել, սակայն նշել է, որ ոչ վաղ անցյալում այդ միջոցները (պետական գնումների ընթացակարգի միջոցով ձեռք բերված) ոչ այդքան որակով են եղել, որի մասին բարձրաձայնել են և ինչի արդյունքում դրանց որակն ավելի է լավացել:

## 7.5. Արտաքին աշխարհի հետ հաղորդակցությունը և վերաբերմունքը

«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն **ՊՈԱԿ-ի** վարչական կազմի հարցված աշխատողի խոսքով՝ տեսակցություններն իրականացվում են սահմանված կարգի համապատասխան՝ ջերմաչափումից հետո, պահպանելով սոցիալական հեռավորությունը (5-6 մետր շահառուի և տեսակցողի միջև), իսկ ամռանը՝ դրսում:

Հարցվող բնակիչները նշել են, որ մինչ համավարակը կարողացել էին այցելուներ ընդունել, սակայն համավարակից հետո հանդիպումների թիվը խիստ կրճատվել է:

Արտաքին աշխարհի հետ հաղորդակցությունն իրականացվում է հեռախոսի միջոցով: Եթե բնակիչը ցանկանում է զանգել հարազատին, ապա պետք է դիմի սոցիալական աշխատողի կամ այլ աշխատողի, որն ազատ լինելու դեպքում թույլ կտա հեռախոսով զանգել: Ըստ հարցված բնակչի՝ դա կարող է լինել «շաբաթը կամ 10 օրը 1 անգամ»:

Վատ վերաբերմունքի մասին տվյալներ ամենաշատը ստացվել են այս հաստատությունում: Ստացվել են արժանահավատ տեղեկություններ, որ աշխատողներից ոմանք խնամվողների նկատմամբ արտահայտվում են ոչ բարեկիրթ կերպով, վիրավորում են: Հարցվողներից երկուսը հայտնել են, որ Խարբերդի մանկատանն ավելի լավ է եղել, քան «Ձորակ»-ում:

Ստացվել են տեղեկություններ, որոնք կարող են որակվել որպես խոշտանգում, նվաստացնող վերաբերմունք և հարկադիր աշխատանք: Խնամվողներից երկուսի խոսքով՝ իրենք ներգրավված են (մեկը՝ նախկինում) բնակիչների խնամքի աշխատանքում: Բնակիչները, որոնք ծխախոտ են օգտագործում, կախվածության մեջ են աշխատողներից: Վերջիններս, այն ծխախոտը, որը պետք է անվճար տրամադրեն բնակիչներին, օգտագործում են նրանց աշխատեցնելու համար: Ստացված տվյալների համաձայն՝ ծխախոտի մի մասը բաժանում են, իսկ մյուս մասը պահում և տալիս միայն որոշակի աշխատանքի դիմաց, օրինակ՝ զուգարանի, լոգարանի մաքրման, այլ բնակիչների «տակը մաքրելու» դեպքում:

**Խարբերդի մասնագիտացված մանկատան** դիտարկման ժամանակ արձանագրվել է խնամվող անչափահասի նկատմամբ վատ վերաբերմունքի և խտրականության դեպք: Զրույցներում պարզվել է, որ մանկատուն է ուղեգրվել մարդու իմունային անբավարարության վիրուս ունեցող դեռահաս, որի ուղեգրմանն անձնակազմը, այդ թվում՝ տնօրենը, դեմ են եղել, սակայն նախարարության պնդումներից հետո երեխային ընդունել են: Ըստ բուժանձնակազմի հարցված աշխատողներից մեկի՝ տեղյակ են, որ վիրուսը չի տարածվում շփման միջոցով, սակայն աշխատակազմը նրան դիպչելիս կրում է ձեռնոցներ, հորդորել են երեխաներին հեռու մնալ, առանձնացրել են նրա սպասքը, հագուստը լվացվում է առանձին և այլն:

**Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատում** համավարակի ընթացքում տեսակցությունների թիվը նվազել է: Խնամվող անձինք հաղորդակացվում են իրենց ընտանիքների հետ աշխատողների հեռախոսների միջոցով, ինչը հիմնականում խախտում է նրանց անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը: Այլ հաղորդակցության միջոցներից նրանք չեն օգտվում:

Վատ վերաբերմունքի վերաբերյալ տվյալներ այցի ընթացքում չեն ստացվել:

## **8. Այլ արձանագրումներ**

«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնի տարածքում կառուցվել է փոքր առանձնասենյակ, որը նախատեսված է եղել հանդիպումների կազմակերպման համար, սակայն որոշ հարցվածներ նշել են, որ այն ծառայում է տնօրենին և բնակիչներին հիմնականում արգելում են այնտեղ մտնել: Դիտորդական խմբի այցի ժամանակ էլ տարբեր աշխատողներ ուտելիքներով լի ավսեսներ էին տանում դեպի այդ տնակ, որտեղ պետք է ճաշեր տնօրենը:

**Խարբերդի մասնագիտացված մանկատանը** հակասական տեղեկություններ են տրամադրվել (այդ թվում՝ տնօրենի կողմից) ծառայությունների մատուցման



կազմակերպական հարցերի վերաբերյալ: Մասնավորապես՝ նշվել է, որ որոշ ծառայություններ մատուցվում են տնօրենի դստեր ղեկավարած հասարակական կազմակերպության կողմից կամ ֆինանսավորմամբ, որոնք, հաստիքացուցակի ուսումնասիրությամբ մատուցվում են պետական միջոցների հաշվին: Նշված հասարակական կազմակերպությունը չափազանց մեծ ներգրավվածություն ունի հաստատության աշխատանքներում, ինչը, տնօրենի հնարավոր փոփոխության դեպքում, կարող է էական վտանգներ ստեղծել բնակիչների կյանքը կազմակերպելու առումով: Հարկ է առանձին քննության առարկա դարձնել այդ համագործակցությունը՝ դրանք քննարկելով շահերի բախման և բարեվարքության լույսի ներքո, անհրաժեշտության դեպքում նախատեսելով նոր կարգավորումների ներդրում: Անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել հաստիքացուցակները և աշխատողների պատասխանատվության շրջանակը՝ բացառելու նույն անձի կողմից անհամատեղելի հաստիքների զբաղեցումը:

**Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատում** պայմանավորված համայնքով և բնակիչների ու աշխատողների թվով, մեծ է քաղաքական կուսակցությունների և քաղաքական պաշտոններ զբաղեցնող այլ անձանց կողմից միջամտության ռիսկը:

Բոլոր հաստատություններում արձանագրվել են աշխատողների ցածր իրազեկվածություն, մասնագիտական էթիկայի կամ հաղորդակցության հմտությունների բացեր, ինչպես նաև որոշ հաստատություններում աշխատողների կողմից վերհանվել է համակարգված վերապատրաստումների անհրաժեշտությունը:

## 9. Եզրակացություն

Դիտարկված ժամանակաշրջանում բոլոր հաստատություններում պատշաճ ուշադրություն չի դարձվել հակահամաճարակային նվազագույն կանոնների պահպանմանը:

Հաստատությունները թերանում են երեխաների կրթության իրավունքն ապահովելու հարցում՝ չունենալով մարդկային և տեխնիկական անհրաժեշտ ռեսուրսներ, նախապատվությունը տալով ոչ թե երեխայի լավագույն շահին, այլ վարչարարությանը և հաստատությունների դերի մեծացմանը:

Առկա չէ բռնությունների և վատ վերաբերմունքի կանխարգելման արդյունավետ համակարգ, բոլոր հաստատություններում արմատացած է հաշմանդամության կարծրատիպային մոտեցումները, ինչը խոչընդոտում է երեխաների ներդաշնակ զարգացմանը և ապահինստիտուցիոնալացմանը:

Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման համակարգը բավարար ճկուն չէ, չի արձագանքում այն երեխաների և չափահասների կարիքներին, ովքեր ունեն երկրորդային կամ քիչ հանդիպող հիվանդություններ:

Հաստատություններում պետական բյուջեի միջոցներից գնվող հիգիենիկ պարագաները նախատեսված չեն բավարար քանակով, հիմնականում զիջում են որակով և երբեմն անվտանգ չեն:

Սննդի կազմակերպման (ներառյալ գնման) համակարգը ներառական չէ, հիմնականում բացառում է այն անձանց, որոնց ցուցված է հատուկ սննդակարգ:

Առկա չէ ազատ և մեկուսի պայմաններում հաղորդակցության հավասար հնարավորություն հաստատություններում ապրող չափահասների համար:

## 10. Ընդհանուր առաջարկություններ

- Իրականացնել հաստատությունների աշխատողների շրջանում COVID-19-ի և արձագանքման վերաբերյալ համակարգված դասընթացներ և պարբերաբար տրամադրել թարմացումներ հակահամաճարակային կանոնների վերաբերյալ:
- Վերանայել սանիտարահիգիենիկ պայմաններին առնչվող իրավական ակտերը COVID-19-ի և այլ վարակիչ հիվանդությունների լույսի ներքո:
- Կազմակերպել երեխաների կրթությունը հանրակրթական դպրոցներում՝ բացառելով նրանց հատուկ դպրոցներ տեղավորելու պրակտիկան, աջակցել կրթության իրավունքի իրացման համար անհրաժեշտ խելամիտ հարմարեցումների տրամադրմանն ինչպես դպրոցում, այնպես էլ հաստատությունում:
- Ապահովել երեխաների նախադպրոցական կրթությունը՝ բացառելով վարչարարության և սննդի կազմակերպման պատճառով նրանց մեկուսացումը հասակակիցներից:
- Ներդնել բռնության և վատ վերաբերմունքի կանխարգելման արդյունավետ համակարգ՝ շարունակաբար ապահովելով տարբեր հիմքերով խտրականության բացառմանն ուղղված կրթության կազմակերպումը:
- Ապահովել հաշմանդամության՝ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման վերաբերյալ դասընթաց բոլոր տիպի հաստատությունների բոլոր աշխատողների համար, այդ թվում՝ զարգացնելով նրանց հաղորդակցության և էթիկայի գիտելիքները:
- Ներդնել պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման բավարար ճկուն համակարգ, որը չի անտեսի թանկարժեք դեղորդայքի գնումը և բժշկական բոլոր տեսակի միջամտությունների

իրականացումը հաստատություններում ապրող անձանց համար՝ միաժամանակ չխթանելով ինստիտուցիոնալացումը:

- Ապահովել սննդի անվտանգության համար անհրաժեշտ միջավայր բոլոր հաստատություններում: Հաշվի առնել հատուկ սննդակարգի կարիք ունեցող պահանջմունքները և կենսական մյուս կարիքները:
- Երաշխավորել կանանց և աղջիկների սեռական և վերարտադրողական առողջության իրավունքի պաշտպանության նպատակով անհրաժեշտ միջոցների, այդ թվում՝ հիգիենիկ պարագաների առկայությունն անհրաժեշտ թվով և անհատականացված կարգով:
- Պարբերաբար ստուգել երեխաների կողմից ամենօրյա օգտագործման ապրանքների, այդ թվում՝ օճառների, շամպունների, խաղալիքների անվտանգության ստանդարտներին համապատասխանությունը:
- Ապահովել հեռախոսակապ, ինտերնետի հասանելիության համակարգիչներ և ազատ ու մեկուսի պայմաններ բոլոր անձանց հաղորդակցության ապահովման նպատակով:

## 11. Առաջարկություններ՝ ըստ կազմակերպությունների

- **Նորքի տուն-ինտերնատում** վերացնել սննդի կազմակերպման թերացումը՝ ապահովելով անվտանգ և անհատական կարիքին համապատասխան սնունդ:
- **Երևանի թիվ 1 տուն-ինտերնատի** և մյուս հաստատությունների դեպքում ևս կարգավորել քաղաքացիներից սննդի կամ այլ տեսակի օգնության ընդունման հարցը՝ հիմքում դնելով անձի անվտանգության իրավունքը:
- «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնի աշխատակազմի, այդ թվում՝ ղեկավար կազմի համար կազմակերպել մարդու իրավունքների, արժանապատվության և հաղորդակցության վերաբերյալ գործնական դասընթաց: Ուսումնասիրել հարկադիր աշխատանքի վերաբերյալ ստացված տվյալների մանրամասները և բացառել նման դեպքերի կրկնությունը:
- Ուսումնասիրել **Խարբերդի մասնագիտացված մանկատան** և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակը, օրինականությունը և շահերի բախման հարցը:
- **Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատում** անցկացնել հոգեբուժական խնամքի ժամանակակից մոտեցումների վրա հիմնված վերապատրաստում բոլոր աշխատողների համար:
- **Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնում** անցկացնել երեխաների իրավունքների (այդ թվում՝ արժանապատվության նկատմամբ հարգանքի իրավունքը, անխտրականության և հավասարության իրավունքը) վերաբերյալ դասընթաց և հաշմանդամություն ունեցող երեխաների հետ հաղորդակցվելու վերաբերյալ իրազեկման հանդիպում:

- Արդար և թափանցիկ մրցութային կարգով համալրել **Երևանի Մարի Իզմիրյանի անվան մանկատան** վարչական կազմը՝ ապահովելու արդյունավետ կառավարումը և երեխաների ապահինստիտուցիոնալացման գործընթացը:

## 12. Լուսանկարներ և մեկնաբանություններ

### 12.1. Նորքի տուն-ինտերնատ (այց 09.12.2021 թ.)



Լուսանկար 1. Մինս առաքող մեքենան



Լուսանկար 2. Մսի տեղափոխումը խոհանոց՝ առանց նվազագույն սանիտարական պայմանների ապահովման



Լուսանկար 3. Մսի հետ աշխատանքն իրականացվում է առանց արդասահագուստի և ձեռնոցների



Լուսանկար 4. Ճաշարանի սեղաններին դրված են բաց աղամաններ, որոնք չեն ապահովում բավարար հիգիենան



12.2. Նորքի տուն-ինտերնատ (այց 24.12.2021 թ.)



Լուսանկար 5. Պահեստում ապրանքները ոչ միշտ են փակ պահվում



Լուսանկար 6. Բաց դարակներում առկա է նաև սնունդ, որը ծածկված չէ



Լուսանկար 7. Ճաշին բաժանվող աղցանը



Լուսանկար 8. Բաց աղաման ճաշարանում



Հրասանկար 9. Խոհանոցի սեղանին առկա է խավարասեր

### 12.3. Նորրի տուն-ինտերնատ (այց 16.02.2022 թ.)



Հրասանկար 10. Մսի կտրատման սենյակը



Լուսանկար 11. Մապուցվող ճաշափեսակների նմուշները



Լուսանկար 12. Մսի կտրատման սեղանը



Լուսանկար 13. Պահեստում առկա բանջարեղենից կաղամբն ու սրբալիինը

12.4. «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» (այց  
29.12.2021 թ.



Լուսանկար 14. Երեխաների համար պատրաստված սպագետիին

Լուսանկար 15. Երեխաների համար պատրաստված մսով բորշչը

12.5. «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն (այց՝ 04.11.2021 թ.)



Լուսանկար 16. Ճաշարանը

12.6. «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ (այց՝ 14.07.2021 թ.)



Լուսանկար 17. Սաների ննջասենյակը՝ խիտ դասավորած մահճակալներով



Լուսանկար 18. Սաների ննջասենյակը՝ խիտ դասավորած մահճակալներով



Լուսանկար 19. Իսադասնյակ



Լուսանկար 20. Դասասենյակ

**12.7. «Գավառի մանկատուն (այց՝ 19.10.2021 թ.)**



Լուսանկար 21. Լվացարանները





Հուսանկար 22. Ննջասենյակ



Հուսանկար 23. Դասասենյակ

12.8. Երևանի «Մանկան տուն» (այց՝ 29.09.2021 թ.)



Հուսանկար 24. Քաղցրավենիքները և մրգերը



Հուսանկար 25. Լվացարանը և խոզանակները



Հուսանկար 26. Վերանորոգված սանհանգույց/լոգասենյակը



Լուսանկար 27. Խաղասենյակ



Լուսանկար 28. Սանիտարահամաճարակային կանոնների մասին պաստրառ



Լուսանկար 29. Ակրզեղի՝ պարին ամրացված փուփը



Լուսանկար 30. Խմրանյութի խոհանոցում ախտահանող լուծույթների ամանները

12.9. Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ (այց՝ 12.11.2021 թ.)



Լուսանկար 31. Սննդամթերքի ստացման փարածքը, այդ թվում՝ որպես նվիրատվություն ստացված հյութերն ու թանր



Լուսանկար 32. Պահեստում սննդամթերքի բաց փոպրակները



Լուսանկար 33. Ժամկետանց դեղ ինֆերնատում, որը, ըստ աշխատողների, գնել է բնակիչներից մեկը և խնդրել այն պահել

#### 12.10. Խարբերի մասնագիտացված մանկատուն (այց՝ 06.10.2021 թ.)



Լուսանկար 34. Վարակման դեպքում մեկուսացման սենյակ



Լուսանկար 35. Լվացարաններ



Լուսանկար 36. Մարզասարքեր, վերականգնողական սարքեր

12.11. Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն (այց՝  
28.09.2021 թ.)



Լուսանկար 37. Խաղասենյակ



Լուսանկար 38. Ճաշարան





Լուսանկար 39. Աղջիկների ննջասենյակը՝ խիտ դասավորված մահճակալներով

**12.12. Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ (այց՝ 11.02.2022 թ.)**



*Լուսանկար 40. Կանանց բաժանմունքի՝ առանց դռների լոգախցիկները*



*Լուսանկար 41. Ճիլովաները, որոնք անհատական օգտագործման չեն*



Լուսանկար 42. Կանանց բաժանմունքի ճաշասենյակը և ճաշին մատուցվող սնունդը, որը մատուցելուց հետո բուժում և խնամք ստացող անձանց կանչում են ճաշի



Լուսանկար 43. Խոհանոցային մաս



Լուսանկար 44. Շորերի արդուկման սենյակ



Լուսանկար 45. Իսիդ դասավորված մահճակալներով ննջասենյակ



Լուսանկար 46. Խիփ դասավորված մահճակալներով ննջասենյակ



Լուսանկար 47. Խիփ դասավորված մահճակալներով ննջասենյակ

# 13. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մեկնաբանությունները

«ԵՐԵՎԱՆԻ «ՄԱՆԿԱՆ ՏՈՒՆ»  
Պ Ո Ա Կ

0047, Երևան Ա.Արմենակյան 119  
☎ +374 (10)651291  
☎ +374 (10)651362



«CHILDREN'S HOME OF  
YEREVAN» SNCO

0047, Yerevan, Armenakian 119  
☎ +374 (10)651291  
☎ +374 (10)651362  
✉ [mankantun1937@gmail.com](mailto:mankantun1937@gmail.com)

«30» մայիս 2022թ

Ի պատասխան Ձեր՝ 24.05.2022թ.  
SU/ՔՀ-5-2/13881-2022 գրության

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության  
գլխավոր քարտուղար Ս.Մուրադյանին

Հարգելի պարոն Մուրադյան,

Ի պատասխան Ձեր SU/ՔՀ-5-2/13881-2022 գրության, ներկայացնում ենք մեր առաջարկություններն ու առարկումները:

- Անհրաժեշտ ոչ բոլոր վայրերում են եղել ախտահանիչ միջոցներ- մանկան տան բոլոր մուտքերում, խմբասենյակներում, աշխատասենյակներում եղել են ախտահանիչ միջոցներ:
- Մինչդեռ հարցված աշխատողները գրույցում նշեցին, որ ունեն բազմաթիվ հարցեր և լավ կլիներ, որ իրազեկում իրականացվեր, հրավիրվեր վարակաբան- ամենօրյա խորհրդակցությունների ընթացքում թե տնօրենի, թե հաստատության բժիշկների կողմից տարվել են իրազեկման աշխատանքներ, որոնք աշխատակիցների կողմից ընդունվել են ի գիտություն և հավելյալ հարցադրումներ չեն առաջացել: Պետք է նշել նաև ,որ մանկան տան բոլոր աշխատակիցները պատվաստվել են, որը տարված աշխատանքների լավագույն ապացույցն է:
- Աշխատակազմի որոշ ներկայացուցիչներ, այդ թվում՝ տնօրենը, գրույցներում հայտնել են COVID-19-ի վերաբերյալ հակազդեցական, դավադրապաշտական և անհիմն վախերի վրա կարծիքներ, ինչը կարող է վտանգավոր լինել երեխաների առողջության հարցերում որոշում կայացնելիս- թե տնօրենի, թե աշխատակիցների կողմից խստագույն պահպանվել են կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման կանոնները, որի շնորհիվ որևէ երեխայի կյանքին և առողջությանը վտանգ չի սպառնացել, չենք ունեցել հիվանդության բռնկման դեպքեր:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
<<ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ>> ՊՈԱԿ

" CHILDREN'S HOME - AFTER MARIE IZMIRLIAN " STATE NON  
COMMERCIAL ORGANIZATION OF THE MINISTRY OF LABOUR  
AND SOCIAL ISSUES OF REPUBLIC OF ARMENIA

«01» «հունիսի» 2022թ.

№Ե \_\_\_\_\_

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի  
Նախարարության գլխավոր  
քարտուղար՝ Ս. Մուրադյանին

Հարգելի՛ պարոն Մուրադյան,

Ի պատասխան Ձեր 24.05.2022թ-ի SU/ՔՀ-5-2/13881-2022 գրության, Ձեզ ենք հայտնում <<Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն>> ՊՈԱԿ-ի դիրքորոշումը ՊՈԱԿ-ներում մշտադիտարկում իրականացրած հասարակական դիտորդական խմբի կազմած տարեկան զեկույցի վերաբերյալ:

4.1 Համավարակի ընթացքում մանկատունը աշխատել է 14-օրյա փակ աշխատանքային գրաֆիկով, խիստ սահմանափակ է եղել դրսից եկող այցելուների քանակը, իրականացվել է սպասարկող անձնակազմի թեստավորում /14 օրը մեկ/, իրականացվել է ամենօրյա հակահամաճարակային միջոցառումներ, սակայն հաշվի առնելով մանկատանը խնամվող շահառուների առողջական խնդիրները մասնավորապես մտավոր ունակությունները, վարքային խնդիրները, շահառուները չէին կարող դիմակ կրել: Ինչ վերաբերում է աշխատակիցներին, վերջիններս աշխատում էին 14-օրյա հերթափոխային գրաֆիկով, թեստավորված էին և խստորեն պահպանում էին հակահամաճարակային կանոնները:

Համավարակի առաջին օրվանից մինչ օրս Մանկատան ողջ տարածքում տեսանելի վայրերում տեղադրված են դիսպենսերներ՝ ակոհոլի հիմքով ախտահանիչ



միջոցներ, որոնք ամեն օր լցվում են համապատասխան նյութերով: Մանկատունը ապահովված է պաշտպանիչ բոլոր միջոցներով /դիմակ, ձեռնոց, բախիլ և այլն/:

Անցակետում առկա են էլեկտրոնային ջերմաչափեր, ջերմաչափման արդյունքները գրանցվում են աշխատողների և այցելուների համար նախատեսված գրանցամատյաններում, իսկ շահառուների ջերմաչափման արդյունքները գրանցվում են խմբերում առկա ջերմաչափման թերթիկներում /օրը 2 անգամ/:

4.2 Մանկատանը խնամվող շահառուներից քվիդի դեմ պատվաստվել են 18-ից բարձր տարիքի շահառուները: Հաշվի առնելով երեխաների մտավոր զարգացվածության աստիճանը, հնարավորության սահմաններում, նրանք իրազեկվել են հիվանդության ընթացքի և հետագա բարդությունների մասին: Հնարավոր է, որ շահառուները պատվաստման գործընթացը շփոթեն թեստավորման /քիթ ըմպանից վերցվող/ ընթացքի հետ:

4.3 Մանկատան բուժկետը աշխատում է 24 ժամյա հերթափոխային գրաֆիկով /1 բժիշկ, 1 բուժքույր, ցերեկային բժիշկ և բուժքույրեր, որոնք իրականացնում են շուրջօրյա հսկողություն մանկատան շահառուների առողջական վիճակի նկատմամբ և սերտորեն համագործակցում շահառուների հետ աշխատող մյուս մասնագետների հետ/: Շահառուների տրամադրության և առողջական վիճակի որևէ փոփոխություն չի կարող աննկատ մնալ հսկողությունից:

Շահառուների բժշկական փաստաթղթերը հիմնականում թղթային են, էլեկտրոնային տարբերակով յուրաքանչյուր շահառու ունի իր էպիկրիզը:

Մանկատունը գնումների գործընթացով նախատեսված հայտով պարբերաբար ստանում է հիգիենիկ պարագաներ՝ տակդիրներ, ներդիրներ, միջադիրներ, թաց և չոր անձեռոցիկներ, որոնք պահեստից դուրս են գրվում բուժաշխատողի կողմից և տրվում են խմբերին ըստ անհրաժեշտության:

4.4 Համավարակի պատճառով ՀՀ բոլոր դպրոցներում դադարեցվել է առկա ուսուցումը և անցել են հեռավար ուսուցման համակարգին, մանկատան երեխաները նույնպես անցել են հեռավար ուսուցման:

Մանկատանը առկա է թվով 2 հարմարեցված ավտոմեքենա նախատեսված 4-5 սայլակով երեխաների տեղափոխման համար, դպրոց հաճախող երեխաների թիվը 53 է և երեխաներին դպրոցներից ուշ կամ շուտ բերելը պայմանավորված է տեխնիկական և մարդկային ռեսուրսների անհամապատասխանությամբ:

4.5 Մանկատանը՝ տղաների խմբում փոխվել են բոլոր մահճակալները, որոնք չափով և ձևով ավելի հարմար են շահառուներին, իսկ ճաշարանում սեղան-աթոռների թիվը համապատասխանեցվել է խմբում խնամվող շահառուների թվին:

Մանկատան խմբերում առկա սանհանգույցներում լոգարանային հատվածը առանձնացված է վարագույրներով, իսկ զուգարանները հարմարեցված են /դուռ չունեն/, քանի որ խնամվող շահառուների գերակշիռ մասը ունեն մտավոր տարբեր աստիճանի արտահայտվածության խնդիրներ, և մշտապես կաիրք ունեն խնամողի աջակցության:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ



S. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԵՐԵՒԱՅԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»  
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Երևանի թիվ 1 գանձապետական բաժանմունք  
Հ/Հ 900218000884  
ՀՎՀՀ 05552136  
Շիրակացի 10

Հեռ. / 0 312 / 3 27 93  
shirak.childcarecenter@mlsa.am

SU/ՔՀ-5-2/13881-2022

«Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղար պարոն Ս. Մուրադյանին»

Հարգելի պարոն Մուրադյան,

Ձեզ ենք ներկայացնում «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում մշտադիտարկում իրականացնելու արդյունքում հասարակական դիտորդական խմբի կազմած տարեկան զեկույցի վերաբերյալ կազմակերպության դիրքորոշումը:

- Ամբողջ համավարակի ընթացքում բոլոր աշխատակիցները կրել են իրենց անհատական դիմակները, ուսանող շահառուներին պարտադիր ամեն օր հատկացվել է դիմակ, իսկ դպրոցականներին դիմակներ տրամադրել է դպրոցը, քանի որ դիմակների քանակը եղել է սահմանափակ: Հիվանդ երեխաների համար առկա է մեկուսարան:
- Գործում է կենտրոնի մուտքերից միայն գլխավոր մուտքը, որտեղ միշտ առկա են եղել ախտահանիչ միջոցները:
- Գրանցամատյանները միշտ լրացվել են պատշաճ կերպով, ջերմաչափումը իրականացվել է երկու և ավելի անգամ, երեխաների ջերմության դեպքում նշվել է ջերմաստիճանի փոփոխությունը:
- Սկսած համավարակի սկզբից, երբ կազմակերպությունը աշխատել է փակ ռեժիմով, մշտապես տարվել են զրույցներ թե ընդհանուր, և թե կլոր սեղանի շուրջ՝ համավարակի վերաբերյալ:
- Չնայած աշխատակիցների տարակարծիք լինելուն պատվաստվել են ամբողջ աշխատակազմի 98%-ը, իսկ 2%-ը գտնվել են քիմիոթերապիայի բուժման մեջ և բժշկի կողմից ներկայացրել են տեղեկանք պատվաստման հակացուցման վերաբերյալ:
- Դեղորայքին հատկացված գումարը կրճատվել է 2015 թ.-ից և ոչ թե 2021 թվականից: Ի տարբերություն գիշերօթիկ հաստատության դեղորայքի պահանջը հիմա ավելի մեծ է, քանի որ այժմ խնամվում են 0-18 տարեկան երեխաներ

/ նաև տարբեր հիվանդություններ ունեցող /: Երբեմն ստիպված ենք լինում դիմել տարբեր բարեգործների համապատասխան դեղորայք ձեռքբերելու նպատակով :

- Երեխաների հետ բազմիցս ացկացվել են սեռատարիքային զրույցներ՝ աղջիկների խմբի հետ առանձնահատուկ, տարվել են բացատրական աշխատանքներ անձնական սանիտարահիգիենիկ մաքրության վերաբերյալ, սեռական հասունացման, դրա առանձնահատկությունների և նշանների վերաբերյալ: Հատուկ զրույցներ են տարվել տղաների միջին խմբի հետ՝ սեռական բռնությունից պաշտպանվելու համար:
- Աղջիկներին միջադիրներ հատկացվում է անհատապես և միշտ առկա է բուժկետում: Քանի որ մինչև օրս էլ ունենք անհրաժեշտ հիգիենիկ միջոցների՝ միջադիրների, տակդիրների, թաց և չոր անձեռոցիկների, զուգարանի թղթի պակաս, այս պարագաները ևս ձեռք են բերվում բարերարների կողմից:
- Ատամի խոզանակները և մածուկները մեծ երեխաների մոտ գտնվում են անհատական պահարաններում իրենց անձնական իրերի հետ փակված վիճակում, իսկ փոքրերինը գտնվում է բուժկետում:
- Այժմ սանհանգույցներում տեղադրված է ջրատաքացուցիչ սարք և ձեռքերի չորացուցիչ:
- Լոզանքի ընթացքում սանհանգույցի դուռը չի փակվում, այլ փակվում է առանձին լողախցիկի դուռը, քանի որ այդ ընթացքում կարող են օգտվել զուգարանից:
- Այժմ աղջիկների ննջասենյակների դռները փոխարինվել են եվրոդռներով և անթափանց ապակիներով են :

Տնօրենի պարտականությունները կատարող՝



Գ. Յայլոյան

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ «ԶԱՏԻԿ»  
ԵՐԵՎԱՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»  
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ



MINISTRY OF LABOR AND SOCIAL ISSUES OF  
THE REPUBLIC OF ARMENIA  
«YEREVAN CHILD SUPPORT CENTRE «ZATIK»  
STATE NON COMMERCIAL  
ORGANIZATION

Երևան 0091, Քանաքեռ, Զ.Կանաքերտսու 145/2  
Հեռ. (Tel.) 283730 Fax 283491

Yerevan 0091, Kanaker, Z. Kanakertsu 145/2  
E-mail zatik.center@gmail.com

02.06.2022թ.

ք.Երևան

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
ՊԱՐՈՆ Ս.ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մուրադյան,

Ի պատասխան Ձեր 24.05.2022թ. ՏՍ/ԲՀ-5-2/13881-2022 գրության՝ տեղեկացնում ենք, որ  
հաշվի է առնվել բոլոր նկատառումները և իրականացվել է համապատասխան բոլոր հնարավոր  
միջոցները՝ արձանագրված թերությունները վերացնելու նպատակով:

Հարգանքով՝

«Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն»  
ՊՈԱԿ-ի տնօրենի Ժ.Ա.Կ.՝ Ա.Բարսեղյան





ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
ՊԱՐՈՆ Ս.ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մուրադյան՝

Ի պատասխան Ձեր՝ 24.05.2022թ.-ի SU/ԲՀ-5-2/13881/2022 գրության, ներկայացնում եմ <<Վարդենիսի նյարդահոգեբանական տուն ինտերնատ>> ՊՈԱԿ-ում մշտադիտարկում իրականացնելու արդյունքում հասարակական դիտորդական խմբի կազմած տարեկան գեկույցի հետ կապված մեր առաջարկությունների և առարկությունների դիրքորոշումները:

1. Մեր կողմից կազմակերպվել է բժշկական անձնակազմի աշխատակիցների՝ բժիշկների և բուժքույրերի մասնագիտական վերապատրաստման դասընթացը: Ներկա պահի դրությամբ բուժ. աշխատակիցների շուրջ 40% -ը վերապատրաստվել են, իսկ մնացած աշխատակիցների վերապատրաստման գործընթացը շարունակվում է և մինչև 2022թ-ի վերջն ավարտվելու է:
2. <<Վարդենիսի նյարդահոգեբանական տուն ինտերնատ>> ՊՈԱԿ-ը 2022թ-ի ընթացքում բժշկական ծառայությունը համալրվել է մեկ հոգեբույժով:
3. Վարդենիսի տուն ինտերնատի կանոնադրության համաձայն կազմակերպության բժշկական անձնակազմը ապահովում է 18 տարին լրացած քրոնիկ հոգեկան խնդիրներ և մտավոր հետամնացություն ունեցող հաշմանդամ անձանց խնամքը և առաջնային բժշկական օգնության սպասարկում:

Նշեմ, որ մեր հաստատության խնամվողները օգտվում են պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման համակարգից: Դիտորդական խմբի գեկույցում նշվում է, որ տվյալ համակարգը ճկուն չէ, ուստի անհրաժեշտ է ներդնել բժշկական օգնության և սպասարկման բավարար. ճկուն համակարգ: Վարդենիսի տուն ինտերնատի խնամվողները, որոնք կարիք ունեն բժշկական ստացիոնար բուժման՝ մեր կողմից ուղեգրվում են Վարդենիսի տարածաշրջանից դուրս, հիմնականում քաղաք Երևան՝ բազմապրոֆիլ բժշկական կենտրոններ: Ցանկանում եմ նշել մեկ-երկու դեպք, երբ ստացիոնար անվճար բժշկական օգնություն ցուցաբերելու ժամանակ տվյալ բուժ կենտրոնից համալիր բուժման համար մեզանից պահանջել են կատարել լրացուցիչ ֆինանսական միջոցների վճարում՝ կատարվող որոշակի բժշկական ծառայության դիմաց: Օրինակ խնամվողի կոնքազդրային հողի կոտրվածքի համար մեզանից պահանջվել է շուրջ 300.000 դրամ լրացուցիչ գումար՝ էնդոպրոթեզավորում կատարելու համար: Այդ հարցով դիմել ենք

աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ մեզ օժանդակելու համար: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը այդ հարցով մեզ օգնելու համար դիմել է առողջապահության նախարարություն, որտեղից պատասխանել են, որ պահանջվող էնդոպրոթեզի տեղադրումը չի ներառվում պետական անվճար բժշկական ծառայությունների չափորոշիչով սահմանված ցանկը հաստատելու մասին թիվ 57-Ն հրամանով հաստատված ցանկում և կատարվում է վճարովի հիմունքներով, որի արդյունքում խնամվողը ոչ լիարժեք բուժումով վերադարձավ տուն ինտերնատ: Այլ բժշկական օգնության հարցերով նման կարգի պահանջներ են ներկայացրել նաև աչքի ոսպնյակի տեղադրման համար, ինչպես նաև դոնորական արյան փոխներարկման անհրաժեշտության համար և ուռուցքաբանության ազգային կենտրոնում որոշ քիմիոթերապիայի նպատակով պահանջվող դեղերի օգտագործման համար: Նշված հարցերի որոշակի դեպքերը լուծվել են մեր կողմից դիմած բարերարների միջոցով, որը չի երաշխավորում նման հարցերի հետագա բավարար լուծում: Ելնելով վերոնշյալ փաստերից, առաջարկում ենք նշված հարցին լուծում տալու համար դիմել ՀՀ կառավարությանը՝ ստեղծել համապատասխան օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր, ստեղծել ճկուն պետական անվճար բժշկական օգնության և սպասարկման համակարգ, քանի որ մեր կազմակերպությանը տվյալ նպատակների համար պետական ֆինանսական միջոցներ չեն տրամադրվել:

4. Զեկույցում նշված է, որ Վարդենիսի տուն ինտերնատի խնամվողները իրենց հարազատների հետ կապ են հաստատում հիմնականում աշխատակիցների հեռախոսների միջոցով, ինչը հիմնականում խախտում է նրանց անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը: Նշեմ, որ այդ մեզ մոտ խնամվողները օգտվում են հիմնականում մեր աշխատակիցների՝ բուժքույրերի, հոգեբանների և սոցիալական աշխատողների անձնական հեռախոսներից՝ նրանց ներկայությամբ: Այս երևույթի մեկնաբանությունը կայանում է նրանում, որ երբ խնամվողի մոտ եղել է անձնական հեռախոս, ապա բազմիցս խնամվողները զանգահարել են հարազատներին և տեղեկացրել են, որ իրենց տուն ինտերնատից դուրս են գրել և հարազատները մեզ հետ ունեցել են տհաճ խոսակցություններ: Բազմիցս խնամվողները զանգահարել են ոստիկանություն, հրշեջ ծառայություն և շտապ օգնություն՝ այդ կազմակերպություններին հաղորդելով համապատասխան սուտ տեղեկատվություններ, որոնք պատահել են տուն ինտերնատում, որի արդյունքում մեզ մոտ են եկել այդ կազմակերպությունների աշխատակիցները՝ պատրաստ անձնակազմով և ունեցել են տհաճ խոսակցություն: Ուստի մենք վստահեցնում ենք դիտորդական խմբին, որ մեր խնամվողները ցանկացած ժամանակ կարող են կապ հաստատել իրենց հարազատների հետ՝ մեր աշխատակիցների հեռախոսով և նրանց ներկայությամբ:

ՏՆՕՐԵՆ՝

Կ. ԽԱՀԱՏՐՅԱՆ

Կատ. պետ բժշկական ծառայության՝ Մերուժան Հակոբյան

**«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնն ՊՈԱԿ-ի պարզաբանումներն ու առարկությունները զեկույցի վերաբերյալ**

**Հակահամաճարակային կանոնների պահպանումը, պատվաստումների իրավիճակը և կանխարգելիչ այլ միջոցառումների իրականացումը**

«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնն ՊՈԱԿ 2021 թ.-ի նոյեմբերի 4-ի այցի ժամանակ դիտորդների ջերմաչափում կամ կանխարգելիչ այլ միջոցառում չի իրականացվել:

Այցի ընթացքում աշխատողները դիմակ չեն կրել: Անհրաժեշտ բոլոր վայրերում տեղադրված չի եղել փակ աղբաման, ախտահանիչ նյութեր:

Նշվել է, որ դիտարկման դրությամբ վարակված բնակիչները ոչ միշտ են մեկուսացվում ընդհանուր խմբից, հակահամաճարակային կանոնները նույն խստությամբ չեն պահպանվում ինչպես համավարակի սկզբում:

**Առարկություն.** «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնն» ՊՈԱԿ-ում ՀՀ Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանի պահանջներով կատարվել է ամենօրյա ջերմաչափում, յուրաքանչյուր աշխատողի ջերմությունը չափվում էր աշխատանքի ներկայանալու պահին: Բայցի այն, որ ՊՈԱԿ-ի աշխատակիցների ջերմությունը չափվում էր մուտքի դարպասների մոտ, նաև առկա է անշարժ հեռահար ջերմաչափ ընդունարանում, մինչ օրս աշխատակիցները ջերմաչափվելուց հետո նոր անցնում են աշխատանքի, բացառությամբ բարձր ջերմություն ունեցող աշխատակիցների:

Աշխատակիցները դիմիակ կրել են մինչև պարտադիր պահանջի հանվելը:

Անհրաժեշտ բոլոր վայրերում առկա են եղել և մինչև այժմ առկա են փակ աղբամաններ, ախտահանիչ նյութեր:



*Դիպորդական խմբի այցի ժամանակ վարակված բնակիչներ չենք ունեցել, ուստի մեկուսացման անհրաժեշտություն չի եղել:*

**Աշխատակազմի և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրազեկվածությունը COVID-19-ի վերաբերյալ**

«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն ՊՈԱԿ-ի հարցվող բնակիչները նշել են, որ վարակի վերաբերյալ իրազեկվել են հաստատության առաջին վարակման դեպքից հետո:

Վարչական մասի աշխատողներից մեկի խոսքով՝ աշխատակիցների և բնակիչների իրազեկումն իրականացվել է հաստատության բժիշկ-թերապևտների կողմից՝ բանավոր, այդ թվում՝ անհատական զրույցների միջոցով: Տնօրենը նաև նշել է, որ ինքն էլ է իրազեկել բնակիչներին և օրինակ ծառայելու համար, առաջինն է պատվաստվել:

Աշխատակազմի հարցված անդամները նշել են, որ բուժքույրերը իրազեկման զրույցներ են ունեցել բնակիչների հետ, իսկ այն բնակիչների դեպքում, որոնց հետ հնարավոր չեն համարել այդ մասին իրազեկել, հաստատության սոցիալական աշխատողները իրազեկել են բարեկամներին:

Պատվաստման գործընթացի և պատվաստանյութերի վերաբերյալ խնամվողների շրջանում պատշաճ իրազեկում ոչ պատվաստումից առաջ, ոչ դրանից հետո չի իրականացվել:

**Առարկություն.** *ՊՈԱԿ-ի աշխատակիցները և խնամվող բոլոր շահառուները իրազեկվել են համավարակի և դրա հետ կապված կանխարգելիչ միջոցառումների և սահմանափակումների անհրաժեշտության վերաբերյալ դեռ մինչև անցումը փակ աշխատանքային ռեժիմի, այլապես հնարավոր չէր լինի կիրառել սահմանափակումներ: Այնուհետև պարբերաբար տեղեկացվել են ՀՀ պարետարանն նոր հրահանգներին:*

*Պատվաստման գործընթացից առաջ իրազեկվել են բոլոր աշխատակիցներն ու շահառուները, դեռ ավելին՝ քանի որ պատվաստվելու և պատվաստանույթերի վերաբերյալ նշված ժամանակ տարաբնույթ մտահոգություններն ու ապատեղեկատվությունը շատ էր, մենք պատվաստվելու վերաբերյալ տեղեկացրել ենք նաև շահառուների հարազատներին:*

**«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն ՊՈԱԿ-ի բժշկական անձնակազմը համալրված է 2 հոգեբույժով, որոնք աշխատում են 0,5 դրույքով, սակայն, ըստ վարչական կազմի հարցված աշխատողի, կարիք կա համալրել կազմը կլինիկական հոգեբանով և լրացուցիչ հոգեբույժով:**

**Բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ բողոքներ բնակիչների կողմից չեն հնչել:**

**Բժշկական մասում առկա դեղորայքը եղել է ժամկետում: Եղել է աշխատողների ջերմաչափման մատյան:**

***Առարկություն.** Վարչական կազմի ոչ բոլոր աշխատակիցներն են իրավասու պատասխանել բուժ. անձնակազմը համալրելու վերաբերյալ հարցին: Դիտորդական խմբի մասնակիցները հավանաբար սխալ են հասկացել մասնագետների պակաս լինելու հարցը: Խոսքը եղել է ոլորտում համապատասխան մասնագետ հոգեբանների և ՀՀ հոգեբուժների պակասի մասին այլ ոչ թե ՊՈԱԿ-ի կարիքների մասին: Հավելյալ հոգեբուժի և հոգեբանի կարիք ՊՈԱԿ-ը չունի: ՊՈԱԿ-ի հաստիքացուցակը կազմվել է ՀՀ Կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N 1292-Ն որոշման համապատասխան:*

**«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն ՊՈԱԿ-ի լվացարաններում մեկանգամյա սրբիչներ առկա չեն եղել, սակայն բոլոր շահառուներն ունեցել են իրենց անվանական սրբիչները և հիգիենիկ պարագաները՝ կոշտ օճառ, ատամի խոզանակ և այլն: Շամպունը մեկն է եղել ամբողջ խմբի համար: Հիգիենիկ պարագաները ժամկետի մեջ էին: Առաջին հայացքից որակի հետ կապված մտահոգությունների առիթ չի եղել:**

Միջադիրներ, տակդիրներ սենյակներում չեն եղել, ըստ անձնակազմի՝ տրամադրվում են ըստ անհրաժեշտության: Մաքրող միջոցներ առկա են եղել: Թե՛ մաքրությամբ զբաղվող աշխատողները, թե՛ ախտահանման պատասխանատու բուժանձնակազմը, այդ պահին եղած միջոցներից դժգոհություններ չի ունեցել, սակայն նշել է, որ ոչ վաղ անցյալում այդ միջոցները (պետական գնումների ընթացակարգի միջոցով ձեռք բերված) ոչ այդքան որակով են եղել, որի մասին բարձրաձայնել են և ինչի արդյունքում դրանց որակն ավելի է լավացել:

*Պարզաբանում. Պեղական գնումների ընթացակարգի միջոցով ձեռք բերված ապրանքները բացառապես համապատասխանում են տվյալ պայմանագրի տեխնիկական բնութագրին:*

«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն ՊՈԱԿ-ի վարչական կազմի հարցված աշխատողի խոսքով՝ տեսակցություններն իրականացվում են սահմանված կարգի համապատասխան՝ ջերմաչափումից հետո, պահպանելով սոցիալական հեռավորությունը (5-6 մետր շահառուի և տեսակցողի միջև), իսկ ամռանը՝ դրսում:

Հարցվող բնակիչները նշել են, որ մինչ համավարակը կարողացել էին այցելուներ ընդունել, սակայն համավարակից հետո հանդիպումների թիվը խիստ կրճատվել է:

Արտաքին աշխարհի հետ հաղորդակցությունն իրականացվում է հեռախոսի միջոցով: Եթե բնակիչը ցանկանում է զանգել հարազատին, ապա պետք է դիմի սոցիալական աշխատողի կամ այլ աշխատողի, որն ազատ լինելու դեպքում թույլ կտա հեռախոսով զանգել: Ըստ հարցված բնակչի՝ դա կարող է լինել «շաբաթը կամ 10 օրը 1 անգամ»:

*Առարկություն. Շահառուների հետ կապը հարազատների հետ իրականացվում է ոչ թե սոց. աշխատողի զբաղված լինել-չլինելու պարագայում, այլ շահառույի և նրա հարազատի ցանկության պարագայում (դեպքեր կան, երբ շահառուի հարազատը չի ցանկանում հաճախ խոսել խնամվողի հետ): Դիտորդական խմբի կողմից հարցված*

բնակիչը միգրացե ցանկություն է ունեցել զանգահարելու շաբաթը մեկ անգամ, սակայն կան շահառուներ որ հեռախոսակապից օգտվում են նվազագույնը երկու օրը մեկ անգամ: Մեկ շահառույի հարցման միջոցով չի կարելի կարցիք կազմել շահառուների արտաքին աշխարհի հետ հաղորդակցության մակարդակը: Հարկ է նշել նաև, որ շահառուներից ոմանք ունեն սեփական բջջային հեռախոս:

**Վատ վերաբերմունքի մասին տվյալներ ամենաշատը ստացվել են այս հաստատությունում: Ստացվել են արժանահավատ տեղեկություններ, որ աշխատողներից ոմանք խնամվողների նկատմամբ արտահայտվում են ոչ բարեկիրթ կերպով, վիրավորում են: Հարցվողներից երկուսը հայտնել են, որ Խարբերդի մանկատանն ավելի լավ է եղել, քան «Ձորակ»-ում:**

**Առարկություն.** Հարգալից և բարեկիրթ վերաբերմունքն ու հարաբերությունները աշխատակիցների և շահառուների միջև, հարգալից և բարեկիրթ վերաբերմունքը շահառուների հանդեպ, հարգալից և բարեկիրթ վերաբերմունքը աշխատակիցների հանդեպ մեր և անձամբ իմ սկզբունքային մոտեցումն է, ուստի զեկույցում նշված տեղեկությունը վատ վերաբերմունքի մասին որակում եմ որպես զրպարություն: ՊՈԱԿ-ում տիրող հարգալից և բարիդրացիական մթնոլորտի մասին վկայում են շահառուների հարազատների և ՊՈԱԿ-ի հյուրերի բազում դրական արտահայտումներն ու շնորհակալական խոսքերը:

**Ստացվել են տեղեկություններ, որոնք կարող են որակվել որպես խոշտանգում, նվաստացնող վերաբերմունք և հարկադիր աշխատանք: Խնամվողներից երկուսի խոսքով՝ իրենք ներգրավված են (մեկը՝ նախկինում) բնակիչների խնամքի աշխատանքում: Բնակիչները, որոնք ծխախոտ են օգտագործում, կախվածության մեջ են աշխատողներից: Վերջիններս, այն ծխախոտը, որը պետք է անվճար տրամադրեն բնակիչներին, օգտագործում են նրանց աշխատեցնելու համար: Ստացված տվյալների համաձայն՝ ծխախոտի մի մասը բաժանում են, իսկ մյուս մասը պահում և տալիս միայն որոշակի աշխատանքի**

**դիմաց, օրինակ՝ զուգարանի, լոգարանի մաքրման, այլ բնակիչների «տակը մաքրելու» դեպքում:**

**Առարկություն.** *Դիպորդական խմբի անդամները հավանաբար լավ չեն պատկերացնում մեր շահառուների առանձնահատկությունները. Ծխող շահառուները շատ լավ գիտեն իրենց հասանելիք ծխախոտի քանակը և չտալ կամ որևէ աշխատանքի դիմաց տալ իրենց ծխախոտը անհնարին է, քանի որ կհանի իրենց հոգեկան հավասարակշռությունից, կառաջացնի դրդվածություն: Բնակիչները ծխել և ծխում են իրենց հասանելիք ծխախոտը: Վերոնշյալը բացարձակ չի համապատասխանում իրականությանը: Շահառուներից ոմանք իրենք են ցանկանում աշխատել և հոգեբուժի, բժիշկի, սոց. աշխատողի թույլատրությամբ նրանք մասամբ մասնակցում են որոշ աշխատանքներին:*

**Հեղափոխություն:** *Մենք շնորհակալ ենք դիպորդական խմբին կատարված աշխատանքի, բարձրացրած հարցերի համար, սակայն ցավով պետք է նշենք, որ զեկույցում զեդեղված տեղեկատվությունը հիմնականում հեռու է իրականությունից և սիրողական մակարդակի է: Իրականացվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար, ծանկանում ենք, որ հասարակական խմբի կողմից իրականացվող մոնիթորինգը լինի անաչառ իսկ դիպորդական խմբերում ներգրավված մասնակիցները լինեն ոլորտային մասնագետներ:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՇԽԱՏՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼ ԱԿՄԱՆ  
ՀԱՐՑԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
«ԳԱՎԱՌԻ ՄԱՆԿԱՏՈՒՆ»  
ՊՈԱԿ



REPUBLIC OF ARMENIA  
MINISTRY OF LABOUR  
AND SOCIAL ISSUES  
«GAVAR ORPHANAGE»  
SNTO

ք. ԳԱՎԱՌ ՕԳՈՍՏՈՍԻ - 23-ի փող. GAVARTOWN#106OGOSTOSI 23 str.  
e-mail:gavarimankatun@rambler.ruhtml, tel. (0264) 2-21-56, 2-23-50

31<<Մայիս>>2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼ ԱԿՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
ՊԱՐՈՆ Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ


ՀԱՐԳԵԼԻ՝ ՊԱՐՈՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ի կատարումն Ձեր՝ 24.05.2022 SU/ՔՀ-5-2/13881-2022 հանձնարարականի, հայտնում ենք, որ հասարակական դիտորդական խմբի կողմից 2021թ.-ի ընթացքում <<Գավառի մանկատուն>> ՊՈԱԿ-ում կատարված մշտադիտարկման վերաբերյալ զեկույցում նշված դիտողությունները մասամբ շտկվել են, այն է՝ խոհանոցի լվացարանում տեղադրվել են փակվող աղբամաններ, բուժկետին տրամադրվել է համակարգիչ՝ երեխաների բժշկական տվյալները ներմուծելու համար:

Մեկանգամյա սրբիչների բացակայության վերաբերյալ դիտողությունը գտնում ենք տեղին, բայց ոչ հեշտ իրականացվող, քանի որ գնումների գործընթացով այն նախատեսված չէ և ծախսատար է:

Միաժամանակ, ողջունում ենք հասարակական դիտորդական խմբի կողմից մշտադիտարկում անցկացնելու պրակտիկան, որի արդյունքում բարձրանում է կազմակերպություններում անցկացվող աշխատանքների որակը, շտկվում են թերությունները:

<<ԳԱՎԱՌԻ ՄԱՆԿԱՏՈՒՆ>> ՊՈԱԿ-Ի ՄԵԹՈՂԻՍ,  
ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԿԱՏԱՐՈՂ՝

  
Ն. ԽԱՆԴԱՆՅԱՆ



ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
ՊԱՐՈՆ Ս.ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մուրադյան.

Ի պատասխան 24.05.2022 թ. թիվ SU/ՔՀ-5-2/13881-2022 գրության՝ տրամադրում ենք տեղեկություններ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության՝ երեխաներին, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ մատուցող ՊՈԱԿ-ներում մշտադիտարկում իրականացնելու արդյունքում հասարակական դիտորդական խմբի կազմած տարեկան զեկույցի վերաբերյալ:

5.2. Աշխատակազմի և տարեցների իրազեկվածությունը COVID-19-ի վերաբերյալ.

Համավարկի առաջին իսկ օրերից բուժանձնակազմը մշտապես իրականացրել է կորոնավիրուսային հիվանդության վերաբերյալ իրազեկման և ուսուցողական քննարկումներ:

1) Ի՞նչ է կորոնավիրուսը, որոնք են ախտանիշները, ինչպե՞ս է տարածվում վիրուսը, որքան ժամանակ անձը կարող է լինել վարակիչ այլոց համար և ովքեր են գտնվում հիվանդության զարգացման բարձր ռիսկային խմբում: Հետագայում իրազեկվել է պատվաստումների անհրաժեշտության և կարևորության մասին, կազմակերպվել է պատվաստանյութի ընտրությունը կողմնորոշող ուսումնական տեսաֆիլմերի ցուցադրություն, միաժամանակ սերտ համագործակցելով թիվ 5 պոլիկլինիկայի բուժ անձնակազմի հետ, իրականացվել է պատվաստումներ՝ մի քանի փուլերով:

### 5.3. Բժշկական օգնությունը և սպասարկումը.

Նորքի տուն-ինտերնատում դեղորայք ստացվում է ՀՀ գնումների մասին օրենքի համապատասխան: Բաց թողումը կատարվում է բժշկի ամենօրյա շրջայցի ընթացքում շահառուի ներկայացրած գանգատի և նախնական ախտորոշման, հիմնական հիվանդության (ըստ էպիկրիզի) դեղորայքային բուժման հիման վրա, որը գրանցվում է բժշկական քարտում և դեղատոմսում (երկու օրինակով):

Մարսողական հիվանդությունների դեպքում բացառվում է կծու, թթու, գրգռող և վքնածություն առաջացնող սննդակարգը, որը հսկվում է մասնագիտությամբ գաստրոէնտերոլոգ բժշկական ծառայության ղեկավարի կողմից: Զուգահեռ նշանակվում է համապատասխան բուժում՝ ըստ անհրաժեշտության:

Ներարկումները տուն-ինտերնատում իրականացվում են մ/մ և ն/ե եղանակներով, ն/ե կաթիլային եղանակի թույլտվություն չունենալու պատճառով այդ եղանակը չի կիրառվում, որը սակայն դժգոհությունների տեղիք է տալիս շահառուների մոտ: Վերջիններս հոգեբանորեն ենթադրում են այդ եղանակի առավել օգտակարությունը, սակայն՝ ըստ անհրաժեշտության, նախնական պայմանավորվածությամբ կազմակերպվում է հետագա ստացիոնար բուժզննում և բուժում հիվանդանոցային պայմաններում:

Տուն-ինտերնատում բժշկական փաստաթղթերը թղթային են, քանի որ յուրաքանչյուր շահառու ունի անհատական համարակալված բժշկական քարտ, որտեղ գրանցվում են բժշկական համայցի տվյալները, լաբորատոր հետազոտությունների տվյալները, նշանակված բուժումները և դինամիկ դիտարկումները: Քանի որ շահառուները հաշվառված են թիվ 5 պոլիկլինիկայում, նեղ մասնագետների խորհրդատվությունները, լաբորատոր-գործիքային հետազոտություններն և ստացիոնար ուղեգրումները գրանցվում են Արմեդ համակարգում:

### 5.4 - Կենցաղային սպասարկումը և անվտանգությունը.

Սննդի կազմակերպման հետ կապված խնդիրների առնչությամբ տեղեկացնում ենք, որ ծերերի և հաշմանդամների ընդհանուր տիպի տուն-ինտերնատներում խնամվողներին հատկացվող սննդամթերքի չափաքանակների և էներգետիկ արժեքի նվազագույն չափորոշիչները՝ սահմանված են ՀՀ կառավարության 31 մայիսի 2007 թվականի N 730-Ն որոշման N 2 հավելվածի համաձայն, ըստ որի՝



խնամվողների սննդի օրական սպառման նվազագույն էներգետիկ արժեքը չպետք է պակաս լինի 2100 կկալ-ից, ընդ որում, խնամվողներին տրվող սննդի օրական չափաքանակում պարտադիր պետք է պարունակվի առնվազն 10-15 տոկոս սպիտակուց, 28-32 տոկոս ճարպ, 55-60 տոկոս ածխաջրեր: Խնամքի ծառայությունների չափորոշիչները և մատուցվող ծառայությունների նկարագրերը վերանայելու նպատակով համապատասխան առաջարկություններ ենք ներկայացրել նախարարություն, որպեսզի ընդգրկվի կառավարություն ներկայացվող որոշման նախագծի մեջ:

Զեկույցում ներկայացված է, նաև որ ըստ տարեցներից մեկի ձևակերպման՝ <<ճաշարանի տրամադրածն ուտելու չէ>>, այս կապակցությամբ գտնում ենք, որ մեկի կարծիքը դեռևս հիմք չէ ընդհանուր կարծիք կազմելու համար, իսկ ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ հատկապես կանայք հիմնականում անձամբ են պատրաստում իրենց սնունդը՝ դա իրականությանը չի համապատասխանում: Իրականում բոլորն էլ սահմանված կարգով օրը 3 անգամ օգտվում են ճաշարանից, իսկ դրան զուգահեռ, ելնելով իրենց նախասիրությունից և ցանկությունից, յուրաքանչյուր հարկում առանձնացված խոհանոցում կարող են ևս պատրաստել որևէ սնունդ, դա բնակչի ազատ իրավունքն է և ոչ ոք չի կարող արգելել:

Ընդհանուր առմամբ ճաշացանկերը կազմելիս հնարավորինս հաշվի է առնվում խնամվողների կարծիքը՝ պարտադիր հաշվի առնելով նաև բուժքույր դիետոլոգի կարծիքը՝ այդ առնչությամբ: Ապահովված է նաև ճաշացանկերի բազմազանությունը, ճաշացանկը կարող է կրկնվել 10-ից 15 օրը մեկ անգամ: 2021թվականի ընթացքում տուն-ինտերնատում շահառուների կողմից սննդից հրաժարման դեպքեր չի գրանցվել:

Արձանագրված է նաև, որ սննդի պահեստում առկա չի եղել բավարար մթերք առաջիկա ժամերի համար, և աշխատողները սա բացատրել են, որ սնունդ ստանալու օր է և կստանան անհրաժեշտ սննդամթերք՝ այս կապակցությամբ նախ տեղեկացնում ենք, որ առաջիկա 48 ժամվա համար նախատեսված սնունդը, կիսաֆաբրիկատների ձևով գտնվում է խոհանոցում: Իսկ ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ պահեստում առկա չէր մեծ քանակությամբ մթերք, բացատրվում է նրանով, որ սննդամթերքի գնումների մրցույթները կազմակերպվում են նախարարության կողմից՝ կենտրոնացված կարգով և հաղթող ճանաչված կազմակերպությունների հետ կնքված

պայմանագրերը տրամադրվում են ՊՈԱԿ-ներին: Հարկ են համարում նշել, որ 2022 թվականի հունվարին կազմակերպությունը դեռևս չի ունեցել սննդի պայմանագրեր և սննդամթերք շարունակել է ստանալ նախորդ տարվա մատակարարների հետ որոշակի ժամկետով համաձայնագրեր կնքելու միջոցով, որի մասին տեղյակ էր նաև նախարարությունը:

Համապատասխան պայմանագրերը տրամադրվելուց՝ հետո անմիջապես ապահովվել է սննդամթերքի մատակարարումները պահնջվող քանակով և ժամկետում:

«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 20.10.2015 թվականի թիվ 143-Ա/1 հրամանի 1.2) «< կետ 3.3-ի 3) >> կետի պահանջների համաձայն յուրաքանչյուր եռամսյակ ներկայացնում ենք «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում տվյալ եռամսյակի ընթացքում սննդամթերքի ձեռք բերման, ընդունման և պահպանման գործընթացում իրականացված դիտարկումների մասին տեղեկատվություն:

Ապահովված է շահառուների մասնակցությունը սննդամթերքի ձեռք բերման, ընդունման և պահպանման գործընթացում, այդ նպատակով նրանք ընդգրկված են դիտարկումներ իրականացնելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կազմում, որը պարբերաբար փոփոխվում է գործընթացին ավելի շատ շահառուներ ներգրավելու նպատակով: Եթե մատակարարված սննդամթերքի որակը չի համապատասխանում ներկայացված տեխնիկական բնութագրի պահանջներին, ապա հանձնաժողովը կազմում է համապատասխան ակտ այդ մասին, իսկ սննդամթերքը ետ է վերադարձնում մատակարարներին՝ ողջամիտ ժամկետում տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան սննդամթերք մատակարարելու պայմանով:

Նշվել է նաև, որ մսի պահեստավորման սենյակի սեղանին եղել է խավարասեր և ներկա աշխատողները նշել են, որ տեղյակ են ու խնդիրը չեն կարողանում լուծել, ավելին դա դիտարկվել է որպես բնական իրավիճակ:

Նշված հարցի կապակցությամբ տեղեկացնում ենք, որ տուն-ինտերնատը կնքել է պայմանագիր «<Երևանի կանխարգելիչ ախտահանում>> ՓԲԸ-ի հետ, որն իրականացնում է դեռատիզացիոն և դեզինսեկցիոն ծառայություններ՝ ըստ ժամանակացույցի. Դեռատիզացիան ամիսը 3 անգամ, Դեզինսեկցիան ամիսը 2

անգամ: Աշխատակիցները որպես բնական իրավիճակ են դիտարկել դեռատիզացիոն և դեգրիսեկցիոն ծառայության աշխատանքները:

Զեկույցում արձանագրվել է նաև, որ տարեցները սպասքը բերում են իրենց սենյակներից, քանի, որ չեն վստահում խոհանոցի սպասքի մաքրությանը,

Այս կապակցությամբ տեղեկացնում ենք, որ կազմակերպության կողմից բնակիչների համար գնվել է համապատասխան սպասք, սակայն բնակիչները հրաժարվել են օգտվել այդ սպասքից, նախընտրելով օգտվել իրենց անձնական սպասքից: Իսկ խոհանոցի սպասքի մաքրության կապակցությամբ տեղեկացնում ենք, որ խոհանոցը ապահովված է մշտական տաք ջրով, սպասքը լվացվում է մանրազնին հատուկ դրա համար նախատեսված հեղուկներով և լվացվանալուց հետո պարտադիր մշակվում է բարձր ջերմաստիճանի ջրով:

Միաժամանակ հարկ եմ համարում նշել, որ դիտորդական խմբի կողմից մշտադիտարկում իրականացված նույն ժամանակահատվածում ՊՈԱԿ-ում ստուգումներ է իրականացվել ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից, ինչպես նաև ուսումնասիրություն է իրականացվել ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի եվ գնահատման վարչության կողմից և նմանատիպ խախտումներ չի արձանագրվել:

Հարգանքով՝

ՏՆՕՐԵՆ



Ա.Բ.ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
«ԽԱՐԲԵՐՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ  
ՄԱՆԿԱՏՈՒՆ»  
ՊՈԱԿ



REPUBLIC OF ARMENIA  
MINISTRY OF LABOUR AND  
SOCIAL ISSUES  
"SPECIALIZED  
CHILDREN'S  
HOME OF KHARBERD"  
SNCO

«31» մայիսի 2022թ.

Ե-

Ի պատասխան Ձեր SU/ԲՀ-5-2/13881-2022 2022-05-24 գրության.

**ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՊԱՐՈՆ Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ**

**ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ**

/2021թվականի գործունեության տարեկան զեկույցի վերաբերյալ/

Ստորև Ձեզ է ներկայացվում զեկույցի մաս կազմող առանձին բաժինների վերլուծությունը.

Ի Պատասխան **6.2 բաժնի աշխատակազմի և հոգեկան խնդիրներ ունեցող անձանց իրազեկվածությունը** COVID-19-ի վերաբերյալ հայտնում եմ, որ մանկատունը 01.04.2020թվականից եղել է «փակ կարանտինային» համակարգում, այնպես ինչպես համակարգի մյուս շուրջօրյա կազմակերպությունները: Պարբերաբար իրականացվել է աշխատակիցների և շահառուների որոշ մասի ընթացակարգերի պահպանման իրազեկում:

Մանկատան մեկ աշխատակցի անձնական կարծիքը չպետք է ընկալվի որպես հաստատությանը բնորոշ հանգամանք՝ COVID-19-ի վերաբերյալ: Ավելորդ չէ նշել նաև, որ 2020թվականը՝ համաձայն ցուցանիշների եղել է «Խարբերղի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի համար նվազագույն մահացության և հիվանդության տարի և մանկատան աշխատակիցների կողմից պարբերաբար ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ շահառուների շրջանում COVID-19-ի վարակի չտարածման համար:

**6.3 Բժշկական օգնություն և սպասարկում բաժնում** հատուկ շեշտադրում է կատարվել մանկատանը խնամվողների սեռական և վերարտադրողական հարցերին: Մանկատանը սեռական դաստիարակությունը իրականացվում է հիմնականում ոչ բժշկական և մասնագիտական գիտելիքներ ունեցող անձնակազմի կողմից և իրականացվում է դաստիարակների, հատուկ մանկավարժների, հոգեբանների կողմից: Բժշկական անձնակազմը զբաղվում է երբ շահառուների մոտ որոշակի ֆունկցիոնալ կամ օրգանական խնդիրներ են առաջանում : Աշխատակիցների պատվաստումներին դեմ կամ կողմ լինելու հանգամանքը խոչընդոտ չի հանդիսացել բոլոր աշխատակիցների COVID-19-ի գործընթացը ամբողջությամբ իրականացնելու համար: Մասնավոր կամ սուբյեկտիվ կարծիքը/ները/ չի կարող տվյալ հարցի նկատմամբ վերջնական և հատկանշական լինել , իսկ ինչ վերաբերվում է անհրաժեշտության դեպքում՝ առողջական խնդիրների պարագայում ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը դիմելուն, ապա հայտնում եմ, որ դա ընթացակարգային գործընթաց է: Ճիշտ է, լավ կլիներ եթե թոթափեինք ավելորդ ծանրաբեռնվածությունը նախարարությունից և վերադասության կարգով չդիմեինք , այլ մի անգամից հնարավորություն ունենայինք դիմել ՀՀ Առողջապահության նախարարությանը ավելի կկրճատեր ժամանակը, կիրականացվեր բլիցային աշխատանք, սակայն պետք չէ մոռանալ ընթացակարգի մասին և հակասել աշխատաձևին:

**6.5 Արտաքին աշխարհի հետ հաղորդակցությունը և վերաբերմունքը** բաժնում ուսումնասիրություն է կատարվել անչափահասի նկատմամբ վատ վերաբերմունքի և խտրականության դեպքի կապակցությամբ: Նշվածի վերաբերյալ պետք է նշել, որ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ը չունի մարդու իմունային անբավարարության վիրուս ունեցող անձանց, շահառուների վարակելիության սպասարկման փորձ , շահառու ընդունվել է մանկատուն 01 հոկտեմբերի 2021թվականին՝ դիտարկումից կարճ ժամանակ առաջ, բաց, հետադարձաբան վերքերով և ինքնասպասարկման խիստ սահմանափակումով: Սույնի կապակցությամբ հայտնում եմ , որ այդ, սգբնական ժամանակահատվածում առկա են եղել որոշակի խնդիրներ՝ նույնիսկ բժշկական անձնակազմի կողմից, սակայն հետևողական և բարեխիղճ աշխատանքի արդյունքում մոտեցումը աստիճանաբար և հիմնավորապես փոփոխվել է , մանկատուն է հրավիրվել «Իրական աշխարհ իրական մարդիկ» հասարակական կազմակերպության փորձագետներին: Հրավերի նպատակն է եղել մանկատանը կազմակերպել սեմինար քննարկում, ինչը նպատակ է հետապնդել աշխատակիցներին ավելի առարկայական բացատրել հիվանդության էությունը և հիվանդին մոտեցման սկզբունքները: Այս պահին դեռահասը ակտիվ կերպով ընդգրկված է և մասնակցում է մանկատանը կազմակերպվող տարբեր ծրագրերում և միջոցառումներում՝ հնարավորության սահմաններում:

Ի թիվս այլ դիտարկումների զեկույցի **8-րդ գլխում** անդրադարձ է կատարվել «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայություններին, մասնավորապես, մատնանշվել է , որ որոշ ծառայություններ մատուցվում են տնօրենի դասեր

ղեկավարած հասարակական կազմակերպության կողմից կամ ֆինանսավորմամբ ,և որ հաստիքացուցակի ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանք մատուցվում են պետական միջոցների հաշվին:

Վերոգրյալի կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանում լուսաբանելու այն հանգամանքը,որ երբևէ ծառայություններ չեն մատուցվել պետական միջոցների հաշվին,ավելին դա իրականությանը չհապատասխանող և բացարձակ սուբյեկտիվ կարծիք է,ինչը մեկնաբանվել է միայն սուբյեկտիվության սահմանների ներսում և իր տարածումը չի գտել պարզ իրականության մեջ, փաստական հանգամանքերի ուսումնասիրության արդյունքում, ուստի այդ կարծիքը էականորեն հակասում է իրականությանը, քանի որ ոչ միայն հաստիքացուցակի ուսումնասիրությամբ, այլև ցանկացած ուսումնասիրության պարագայում պարզապես չի կարող հաստատվել այն, որ ծառայությունները մատուցվում են պետական միջոցների հաշվին, քանի որ դա դուրս է իրականության սահմաններից:

Մատուցված ծառայությունները շահառուներն վերաբերելի չեն,դրանք բացառապես ծրագրային են և այդ ծրագրային ծառայությունները նպաստել են մանկատան զգայական սենյակի,սեմինարների սենյակի ստեղծմանը ,ինչպես նաև փայտամշակման և հաստոցների մի մասի ձեռք բերմանը և այլն:

Ինչ վերաբերում է հասարակական կազմակերպության չափազանց մեծ ներգրավվածություն ունենալուն, և դրա հետագա վտանգներին՝ բնակչության կյանքի կազմակերպման մասով ,ուստի հարկ է առաջանում բարձրաձայնելու և լուսաբանելու , որ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն»ՊՈԱԿ-ի և ՀԿ-ի համագործակցությունը բացի հումանիտական դրսևորումներից և բարեգործական նկատառումներից, այլ առաքելություն չի իրականացնում, ուստի բացարձակ սուբյեկտիվ և ենթադրյալ է այն մոտեցումը , թե իբրև կարող է առաջանալ շահերի բախման կամ այլ ցանկացած ռիսկ՝ ինչը ենթադրյալ գնահատվում է :

Բացարձակ անհեթեթ և մտածածին է այն միտքը , թե իբրև կմրող է անհամատեղելի լինել մանկատան աշխատակիցների աշխատանքը հաստիքացուցակի հետ համադրման արդյունքում , քանի որ մանկատան աշխատակիցները աշխատում են մանկատանը այն աշխատաժամանակով, ինչը նախատեսված է հաստիքացուցակով և ինչի համար վերջիններս ստանում են իրենց հասանելիք աշխատավարձը և ինչն էլ բխում ու չի հակասում ՀՀ աշխատանքային օրենսգրքի նորմատիվներին:

Գտնում եմ , որ իրականության սահմաններից դուրս է նաև առանձին քննության առարկա դարձնել մի հանգամանք, ինչը չի համապատասխանում պարզ իրականությանը, և այս ասպեկտով կատարել դիտարկումներ ու հիմքում դնել բացարձակ սուբյեկտիվ կարծիք ընդունելի չէ, և տանում է գործարար համբավի խաթարմանը:

«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ում աշխատանքները բավականին շատ են հաշվի առնելով մանկատան ծանրաբեռնվածությունն ու երեխաների տարբերվողականությունը, նրանց դժվարություններն ու խնդիրները, այս պարագայում զբաղվածությունն ու ներգարվածությունը միայն խրախուսելի և ողջունելի է և ավելի քան պարզ է, որ չկա ոչ շահերի բախման և ոչ էլ ֆինանսական ռիսկ, քանի որ մանկատան և ՀԿ-ի համագործակցությունը իրականացվում է բարեգործական հիմունքներով, շահերը մարդասիրական են և հասարակության շրջանակում գնահատելի:


Ավելի քան համոզված եմ, որ դիտարկման արդյունքները ընդհանրական չեն, այլ պարզապես սուբյեկտիվ ընկալման խնդիր կա, ինչը հակասում է մանկատան շահերին և ինչու չէ նաև ՀԿ-ի շահերին ու գործունեությանը՝ առաջացնելով գործարար համբավի պաշտպանություն:

Կազմված զեկույցից պարզ չէ նաև, արդյոք դիտորդական խումբը մշտադիտարկման արդյունքները կազմել է խմբում ներգրավված բոլոր անդամների կարծիքների հիման վրա, քանի որ զեկույցի վերջաբանը անդամների կողմից վավերացված չէ, այսինքն հարց է առաջանում զեկույցը վերջնական է թե ոչ, նախագիծ է ,թե ոչ:

Վերը նշվածը դիտարկում չէ , այլ անհրաժեշտություն է, քանի որ վերոշարադրյալը վերնագրվել է որպես դիրքորոշում, իսկ եթե այն խմբում ներգրավված բոլոր անդամների կողմից վավերացվի, ապա դիրքորոշումը կվերանվանվի առարկություն:

Առ դիր՝ հատուկ կարծիք «2»թերթ:

Հարգանքներով.

«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի  
Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝  Ռուզաննա Ասլանյան



✉ Արարատի մարզ, գ. Նոր Խարբերդ	✉ Ararat Marz, Nor Kharberd
☎ 0236 6 00 25 (Մասիս) (Նոր Խարբերդ)	☎ 0236 6 00 25 (Masis) (Nor Kharberd)
091 42 79 60	091 42 79 60



### ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

/2021թվականի գործունեության տարեկան զեկույցի կարգի դիտարկումների վերաբերյալ/

ՀՀ-ում գործող սոցիալական հաստատությունները ունեն բազմաթիվ խնդիրներ և թերություններ, որոնց հիմնական պատճառը ֆինանսական միջոցների անբավարար լինելն է, աշխատակիցների նախադրակավորման ինստիտուտի բացակայությունը շարունակական մարզման կամ վերապատրաստումների կայուն համակարգի և նրա ամբողջական գնահատման միասնական գործիքների բացակայությունն է, ուստի նման կարգի դիտարկումները չեն կարող չլինել սուբյեկտիվիզմի բարձր ցուցանիշով: Դրան գումարած, եթե կոնկրետ դիտարկում իրականացնողները չեն ունենում որոշակի աշխատանքային փորձ, մասնագիտական և ոլորտին վերաբերող գիտելիքներ, որի արդյունքում ստիպված են լինում առաջին պլան բերել մակերեսային, վիճելի երևույթներ՝ օրինակ, COVID-19-ի վերաբերյալ հանձնաժողովը հիմնականում զեկույցի մեջ ներառել է առանձին անհատների մասնավոր կարծիքներ, որը ոչ մի աղերս չունի կազմակերպության այս խնդրի գործունեության հետ: Ավելի խորքային վերլուծությամբ կարելի էր կազմել մահացության, հիվանդացություն, հաստատությունում և դրանից դուրս իրականացված թեստավորման քանակների, նրանց արդյունքների, ինչպես նաև հիմնական ընթացակարգերի պահպանման և իրականացման գործընթացները: Վերլուծել պատվաստումների իրազեկման, պատվաստանյութերի պահպանման, իրականացման, նրա բացասական հետևանքների և դրանց վերաբերյալ այլ խնդիրները:

Սուբյեկտիվիզմը առկա է բոլոր հարցերում, օրինակ նշվում է, որ հայտնաբերվել է անչափահասի նկատմամբ խտրականության դեպք, բայց ցանկացած մասնագետ մասնագիտական խորքային ուսումնասիրության, հոգեբանական վերլուծության արդյունքում կգար այն եզրակացության, որ նման վարակիչ հիվանդություններով շահառուների սպասարկումը լավագույնս կազմակերպելու համար աշխատակազմին անհրաժեշտ է որոշակի ժամանակ՝ որպես ադապտացիոն շրջան:



Պետք է նշել նաև, որ աշխատակիցների վերաբերմունքը մեծամասամբ և ամբողջությամբ պայմանավորված է հիվանդության և հիվանդների հետ աշխատելու ցածր տեղեկատվությամբ,ինչը կարելի էր ենթադրել հաշվի առնելով շահառուի հաստատությունում գտնվելու խիստ կարճ ժամանակը:Մեզանից պահանջվել է մի քանի ամիս հարցը ընդհանրապես օրակարգից հանելու համար և շահառուի նկատմամբ բժշկական,դաստիարակչական և զբաղվածության ժամանակի կազմակերպման ալգորիթմներ մշակելու համար:

Այսպիսով ակնհայտ է ձգտումը այս կամ այն չափ սենսացիա առաջացնող բառապաշարի օգտագործումը:

Ծիծաղելի է նաև, որ որևէ բարեգործական կամ հասարակական կազմակերպության աջակցության դադարեցումը կարող է պետության կողմից 100% ֆինանսավորվող հաստատությունում բերել շահառուների սպասարկման էական վատթարացմանը:Նշում են, որ կազմակերպությունը որոշ ծառայություններ է մատուցում մանկատանը, չնշելով կոնկրետ, որ ծառայությունների մասին է խոսքը,ինչ ժամանակահատվածի, ովքեր են ընդգրկված եղել ծառայության մատուցմանը և այլն: Կարծում ենք այս պարագայում զուտ փորձ է արվել շահարկել այն հանգամանքը , որ ՀԿ-ի նախագահը տնօրենի դուստրն է:Վերոնշյալ ՀԲԿ-ի հիմնական գործառույթները կրթական են կամ նրան հարող ծրագրերը:

Այսպիսով ,մեր կարծիքով ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշտադիտարկում իրականացնելու իրավունքով օժտելուց առաջ պետք է իրականացնի ինչպես կազմակերպությունների, այնպես էլ նրանց մասնագետների հավաստագրման որոշակի գործընթաց 'մշտադիտարկման վերջնարդյունքները և մշտադիտարկման արդյունքում տեղեկատվությունը լինի ավելի խորքային, հավաստի,օգնի նախարարությանը համակարգում դրական փոփոխություններ իրականացնելուն:Լուրջ ,պրոֆեսիոնալ զեկույցները կարող են հիմք հանդիսանալ կամ մեծապես աջակցել համակարգի կատարելագործմանը,ռազմավարական և մարտավարական խնդիրների առավելագույնս լուծմանը:Այլ պարագայում այն միանգամայն անիմաստ է'ըստ մեզ:

Հարգանքներով.

«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար  Ռուզաննա Ասլանյան



✉ Արարատի մարզ, գ. Նոր Խարբերդ

✉ Ararat Marz, Nor Kharberd

☎ 0236 6 00 25 (Մասիս) (Նոր Խարբերդ)

☎ 0236.6 00-25 (Masis) (Nor Kharberd)

091 42 79 60

091 42 79 60